2833

ԳԱՄԱՐ ՎԱՐԹԱՊԵՏ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՔԸ·

891.99
Պ-29

Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՑԵԱՑ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՆ

Ի· ՏԷՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ ԵՒ ԸՆԿ՚·

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. П. БИБЛ. Арм. С. С. Р.
ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՖՈՆԴ
ОБЪЕМНЫЙ ФОНД
Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. МАСНИКЯН

ՄՈՍԿՈՒԱ·

Լազարեանց Ճեմարանի Տպարանումը։

1864·

891.99
Ղ-28

1967 թ.

Հ-5879

ԻՄ ԵՐԳԸ...

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,
Սերս բարեկամք անջատած են ինձանից.
Թառամում եմ ես այս օտար երկրում,
Մենակ ըլլած ծաղկի նման դաշտում։
Կամաց կամաց տարիները անցնում են,
Մեզ նորոգած գարուն, ամառ գարձնում են.
Միայն իմ խեղճ կեանքը չունի ոչինչ նոր,
Ինձ երեկը կրկնվում է միշտ այսօր.
Ապարիզիս նեղ է ճանփան ու փոշոտ,
Խեղճութիւնս համարում են ինձ ամօթ,
Իմ վիճակին կարեկցութիւն մարդ չունի.
«Դա, ասում են, իր կեանքումը գարդ չունի»։
Ես գարդ ունիմ, գարդս մեծ է ու պէսպէս,
Բայց չեն տեսնում ձեր աչքերը կարճատես։
Երբ ես մնայ անհիւրընկալ այս աշխարհ,
Քանի բոպէ բաղդը ժրպտաց ինձ պայծառ.

«Հա, ասացի, դարձել է իմ անիրը,
Լրացել է իմ վատ բաղդի չար թիրը»։
Յանկարծ՝ փրչեց անառաջելի հիւսիսին,
Թառամեցուց վարդ, մանուշակ մայիսին.
Այսպէս չորցուց իմ նազելի հասակը,
Իմ անողորմ, անագորոյն վիճակը։
Ա՜խ, մտեցէ՛ք օրհասական օր մահուան,
Բե՛ր քու հետը սև հող ու նեղ գերեզման,
Թո՛ղ սառ լինի իմ նոր տանը յատակը,
Ծանր քարէ վրայս ծածկած վերմակը։

Բայց ա՜խ՝ երբ որ կանցնի ամիս ու տարի,
Կրմտմտան գերեզմանը այն քարի,
Հետքը անգամ՝ չի մընալու իմ խաչին,
Իմ անունը, իմ յիշատակ — կրկորչին.
Բայց կ'ուզէի թողնել այստեղ մի արձան,
Որ դարէ դար մընար ամուր անկործան...
Ես երգեցի երգ ողորմն ու անուշ,
Իմ քընարի ձայնն էր մեղմիկ ու քընքուշ.
Մի՞թէ այնքան անգութ կ'լինի Լեռա գետ,
Որ անուններս անգամ կ'անէ նա անհետ։

ՆԿԱՐԻՉ։

Լինապիշ, անձայն, խորհուրդ ճակատիդ,
Պատանի՛ ուր ես մրոտքով մոլորած,
Ներկ ու վրձիններ ցիր ցան առաջիդ
Վշնայ կրտաւը քու հանդէպ փրուած։

Շո՛ւռ տուր աչերդդ, նայէ դէս ու դէն,
Տե՛ս քեզ ծաղրում է անմիտ ամբոխը
Զարմիր, սիրելի, այդ անուշ քընէն,
Գոնէ մի անգամ հանէ քու ոխը։

Բայց դու ներում ես նոցա վեհ հոգւով,
Խուլ ես աշխարհի ունայն շըշուկին...
Ցանկարծ աչերդդ փայլեց սուրբ շնորքով,
Հրսկայի սիրտդդ թընդաց խիստ ուժգին։

Առիր վրձինդ, թաց արիր ներկով,
Շունչ տուիր անշունչ կոպիտ կրտաւին,
Երկնից խորհուրդը մեկնեցաւ քեզմով.
Քեզ անկարելին անյայտ է բնաւին.

Սէր, ատելութիւն, հանճար, բարկութիւն
Տուիր պատկերին մատիդ շարժուածով,
Ինչ որ չիյայտնեց ճարտարի լեզուն,
Դու պարզ յայտնեցիր անձայն խօսուածով։

Ապշեց ամբոխը. վաղեց, յառաջեց
Քու կենդանագիր պատկերի դիմաց,
Ծնկաչոք զմռուս ու հալուէ խնկեց,
Գոչեց մեծաձայն «զա՛ է իմ Աստուած»։

Բայց ա՜խ, քու անքուն ժամերու ճիգը
Քանի մի արծաթ հազիւ գին դրին.
Ստեղծողդ գարձար քու խեղճ խրրձիթը,
Ակեր շարեցին շուրջ քու պատկերին։

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ ԵՐԳԸ։

Հիմի էլ լռենք, եղբարք, հիմի՞ էլ,
Երբ մեր թշնամին իր սուրն է դրել,
Իր օրհասական սուրը մեր կրծին,
Ականջ չի դընում մեր լաց ու կոծին,
Ասացէ՛ք, եղբարք Հայեր, ի՞նչ անենք,
Հիմի էլ լռենք։

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին
Դաւով, հրապուրքով տիրեց մեր երկրին,
Ջընջեց աշխարքից Հայկայ անունը,
Հիմքից կործանեց թագաւոր տունը,
Խլեց մեզանից թագ և՛ խօսք և՛ զէնք,
Հիմի էլ լռենք։

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին
Խլեց մեր սուրը — պաշտպան մեր անձին,
Մշակի ձիռքից էլ խոփը խլեց,
Այդ սուր ու խոփից մեր շղթան կռեց,
Վայ մեզ, շղթայով կապած գերի ենք.
Հիմի էլ լռենք։

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին
Սոսկալի զէնքը բռնած մեր գլխին,
Կուլ տալ է տալիս արտասունք առատ,
Աղէխարշ բոզոք վարուց ապիրատ.
Մեր գլուխը լալու Եփրատ ուր պրտռենք,
Հիմի էլ լռենք։

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին
Լիրբ գոռոզութեամբ լցրած իր հոգին,
Արդարութեան ձայնն հանած իր սրտից
Արտաքսում է մեզ մեր բընիկ երկրից.
Պանդուխտ, հալածեալ, նզբարք, ուր գիմենք.
Հիմի էլ լռենք։

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին,
Անգոհ մեր բերած ծանր զոհերին,
Իր լիրբ, նրզոված ձեռքը կարկառեց,
Ազգութեանս վերջին կապը պատռեց.
Հայի կորուստը մոտ է, ինչ անենք,
Հիմի էլ լռենք։

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին,
Արհամարհելով մեր փառքն ազգային,
Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,
Գայլազգեստ գառին մեզ գրլուխ դրաւ,
Սուրբ խորան չունինք, արդ ո՞ւր աղօթենք,
Հիմի էլ լռենք։

Հիմի էլ լռենք՝ մարդիկ ի՞նչ կ'ասեն,
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խօսեն,
Չե՞ն ասիլ որ Հայք արժանի էին,
Այդ սարսափական անարգ վիճակին.
Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք,
Մինչև ե՞րբ լռենք։

Թո՛ղ լռէ մունջը, անդամալոյծը,
Կամ՝ որոց քաղցր է թշնամու լուծը,
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Ե՛կ անվախ ելնենք թշնամու առաջ,
Գոնէ մեր փառքը մահով յետ խլենք
Ու այնպէս լռենք։

ՕՏԱՐՈՒՀԻ ԵՒ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ։

Օտարուհին ինձ ասաց «Էջ՞ ես լալիս, արցունքը
Հեղեղի պէս ինչու՞ են ուռգում քու աչքունքը,
Քու տրտմութեան ճար ունիմ, կըփարատեմ քու դարդը,
Թըշիս վերայ չե՞ս տեսնում փայլած շուշանն ու վարդը։

Զուր մի՛ ջանար, սիրական, իմ դարդը չես փարատիլ,
Հոգիս հոգսից, ցաւերից չես փրկիլ, չես ազատիլ,
Թո՛ղ իմ աչքից հեղեղայ արտասունքի աղբիւրը,
Արտասունքն է լուանում սրտի խոր խոր ցաւերը։

Օտարուհին ինձ ասաց «տե՛ս հասել է գարունքը,
Դաշտերի մէջ բացուել են հազարերանգ ծաղկունքը,
Իջնենք դաշտը օդ քաշենք, ծաղկունք քաղէ փունջ փրնջէ,
Հայրենիքիդ կարօտն ա՛ռ, որ թախիծ քեզ չի տանջէ»։

Հայրենիքիս կարօտը ձեր դաշտերից չեմ առնիլ,
Սառ հիւսիսում երկինքը Հայաստանի չեմ տեսնիլ,
Ուր բիւր պատիկ ցոլուն են արեգակի շողերը,
Կենսատու է անձրևը, մեղրածին են ցօղերը։

Օտարուհին ինձ ասաց «մոռացի՛ր քու հայրենիք,
Քու հայրենին այնտեղ է, ուր սիրում են քեզ մարդիկ.
Տե՛ս արևին, նա պայծառ չէ՞ շողշողում հիւսիսում.
Հայաստանը կորել է, խղճ՛ա, դու ցընորք ես ուզում,

Սուտ են, սուտ քո զբոյց-բը, Հայաստանը չէ՛ կորած,
Նա այնտեղ է, ուր Եփրատ ու Տիգրիսն են գրկուած,
Ուր Երասխը մրմունջով յուզած ջուրն է գլորում,
Ուր Մասիսի գագաթը ամպերից ցած է նայում,
Ուր փայլում է արևը իր կուսական շողերով,
Ուր ջրում է երկինքը երկիրն զով ցողերով,
Ուր որ չի կայ բորբաս, չիկայ շիմուն ու խորշակ.
Օդը շունչ է հրեշտակի, ջուրը մեղր է անուշակ.....
Հայաստանը կայ.... աստ, խոպանացած, ամայի,
Եւ կրծադրկի, երբ նորից ծրծէ քրքտինքը Հայի....
Նորա ստինքը յամառ է, չի կերակրում օտարին,
Օտարն խարուած ասում է «շինքաւ ատողը Հայերին»։
Բայց ի՞նչ, դու չես հասկանալ իմ սրտամաշ գարդերը.
Մի՛ քանար. ինձ չեն սիրիլ թշնիդ փայլուն վարդերը։
Իմ սրտմուխեան ցաւերից խանդաղակաթ գրկելով,
Օտարուհին ինձ տրաւ գաւաթը լի գինիով,
Երկնակապոյտ աչերը անթարթ աչերիս յառած,
Լաց ու ժրպիտ երեսին՝ նա մեղմ ձէնով ինձ ասաց
«Խմի՛ գինի, պատանի, 'ի յիշատակ այն երկրին,
«Որ սրտամաշ կարօտով կոչում ես քու Հայրենին,
«Պարզէ՛ ազնիւ ճակատդ, զուարթացի՛ր, ոգի առ,
«Ցուսակրաւոր այդ դէմքով խրոշմալի մի՛ ձեւանար,
«Զիւնաթաղ ու կիսամեռ դաշտերը գարնային շնչից
«Զի՞նն ըսթափում և յառնում մահահանգոյն խոր քընից.

«Երբ ծագում է արևը մթությունը չի՞ հալածվում,
«Մեռած բնությունն դեպի նոր կեանքը նա չի՞ վերածում.
«Դէհ, պատանի, քաջ եղիր, խրմե՛ գինի, երգ երգէ՛,
«Տէրն է որբոց օգնական, նա քու ազգն էլ կըփրկէ»։

—

Հայկ ու Լեռնին մեռանանք, եղբարք,
Թափ տանք մեզանից փոշին հընութեան,
Վերածենենք մեր մէջ նոր կեանք ու նոր բարք,
Կեցցէ՛ շատ օրեր մանուկ-Հայաստան։

Կեցցէ՛ շատ օրեր մանուկ-Հայաստան,
Նա՝ որ դեռ միայն մեր սրտի խորքում
Ունի իւր հիմքը. ո՛չ տուն, ո՛չ կայան
Ունի տակաւին բուն Հայաստանում։

Եղբարք՝ բանը դեռ անշօշափելի
Այժմուս մեր մտքին՝ ցընորք չի կարծենք,
Բանը կ'մարմնանայ ու տեսանելի
Կըլինի շուտ. միայն մենք վստահ լինենք։

Մեր յոյսը միայն մեր վերայ լինի,
Ձեն պէտք մեզ նրպաստ մեծատուններին,
Ողորմութեամբ թո՛ղ մուրացիկն ապրի,
Մուրացողն միշտ ստրուկ է օտարին։

Կեցցէ՛ Հայաստան, որ երազական
Կարծում են ծերերն. իրօք չէ՛ այդպէս

Մեր հայրենին գեռ չէ շուտակաւն,
Քանի որ ունի քաջ որդիք մեզ պէս։

Բա՛ւ է. օտարին շատ ծառայեցինք,
Ստրկի վիճակին չէ յաւերժական,
Ազատութեան գինն մենք քաջ սերտեցինք,
Էլ չենք հաւատալ օտարի խոստման։

Օտարի շահը թոյն է մահաբեր,
Ոչ է կուրացնում, միտք է պղտորում,
Գերի է դարձնում մարդ ազատասէր,
Ոսկի շղթայով ձեռք ոտք է կապում։

Կրփշրեմ շղթաս, կ'երթամ Հայաստան,
Կրպագնեմ նորա հողը անարատ,
Կ'ասեմ «Եկել եմ որդիդ շուտակաւն,
Գրկիդ մէջ ինձ ա՛ռ, մայր իմ հարազատ։

Զունիմ ես ոսկի, այլ ոսկու մատան,
Ջրլոտ ձեռք ջուխտակ ու սիրտ անմեղեր,
Ձեռքումս ունիմ բահ ու հրացան,
Սրտումս ունիմ ազնիւ խորհուրդներ։

Քու հողն արգաւանդ, ես միշտակ արի,
Մենք հաշտ կու ապրինք շատ ու շատ տարի։
Ուրջունեներդ քեզ ոչինչ շահ չբերայ,
Թոյլ տուր, որ բրռնի հալածեմ նոցա։

Դու որդիք ունիս շորս միլիոն ու կէս,
Թէ յանկարծ գաղթեն՝ նոցա տեղ ունիս,
Ստինքիդ կաթը խնայէ օտարին,
Գալու որդիքդդ քաղցած, ծարաւ են.....

Հարաւ, հիւսիսէն փոշի վերացաւ....
Ձայն, տրուփ, խօսք, շըշուկ զիլ զիլ լսուեցաւ...
Մասսայ ճակատէն մէգը հեռացաւ....
Մանուկ—Հայաստանն ոտքի կայնեցաւ....

—:—

ՄՇԱԿ։

Ո՞ւ լինքը արէաւ, քրտինք երեսին, բեռը շալակած,
Լարիր Մըշեցին մայդանի միջին կանգ առաւ յոգնած.

Լոշտացած ձեռքը երեսին տարաւ, քրտինքը սրբեց,
Բայց երբ որ աչքը շորս կուսմն դարձուց՝ ծանր ա՞խ
քաշեց.

Հեսաւ նա շըքեղ մեծ մեծ դարբասներ գոյնզգոյն ներկած
Պատշգամիր վրայ գօգալ Հայկանայք շար 'ի շար նրստած,

Ղումաշ հոմհարով մարմաւ թըշերին, հով ու զով
տալիս,
Արփուր շորերը թեթեւ քամիէն քըրփուան գալիս,

Ջուխտակ արտասունք ջուհար ակի պէս աչքին ցոլացին.
«Մըշակ, չիլի թէ միտքդ բերիր քու կարօտած եարին».

Մըշակը լուռ էր, նա ինձ չիտրուեց ոչինչ պատասխան,
Դարբասը թողած՝ աչերը դարձուց նա դէպի մայդան.

Երկրուծ կառքի մէջ տեսաւ թէք ընկած մէկ նիհար տըղայ,
Ձաշմակը աչքին, բերնին նարդիլէ՝ զինչ թուրքի աղա,

Մըշակի շրթին անընշմարելի մէկ ժըպիտ խաղաց
«Մըշակ՝ այդ ի՞նչ էր, որ սիրտդ խօսեց՝ ծաղը, թէ նախանձ».

Մըշակը ինձի պատասխան չի տուեց, ասես թէ լալ էր
Բայց հոգերանը իսկոյն կ'իմանար հոգին ի՞նչ հաղ էր.

Մայդանը թողած նա աչքը դարձուց լայն մեծ փողոցին
Ոչըր չիմանալ թէ այն բոպէին ի՞նչ խօսեց հոգին.

Գունդ գունդ գալիս էր ձիով ու հետի սպառազէն լաշքեար.
Ուրջերը առած հարուր ու հազար թմբկահար, փողար.

Ցնծալիր երգով զօրքը տանում էր իր յաղթութիւնը.
Վա՜յ քեզ խեղճ..... քանիել էր քու ազգի տունը.

Մըշակը լուռ մունջ մէկ դի քաշուեցաւ, գողգոջուն ոտքով
Իր ճանիսան գրնաց ծանրը ոնքալով, կամաց երգելով.

Լահարն էկաւ՝ ծառը ծիլ ծիլ ծաղկեցաւ,
Ձիւնը փախաւ, երբ արևը ծագեցաւ,
Երնե՞կ արևն կամ բահարը մեր Հային
Խելք, միտք, նոր բարք, նա քի նոր վարք շնորհ-
հէին.

Հայ բաց աչքերդ, քու կորուստը մօտիկ է,
Ձիմանաս որ տրին տարին զատիկ է,
Եարփազանը, զումաշ շորը քու եարի
Զանգուկներէդ շատ հաղարներ դուս տարին.

Ի՞նչ զարար որ՝ կընկաղ փէշը կարճ ըլայ,
Տարին աւելու համար ասեմ՝ աւել կայ,
Բան կ'ասէի՞ քեզ անօար շորի դէմ,
Երբոր եարիդ բուդը չերևնար տակէն.

Քեզ ո՞վ ասաց, որ ուսումը հագուել է,
Օխտն օտարի հետը գաղտուկ պագուել է,
Թէ որ ատ էր՝ տայիր զաւակիդ Զուլֆին,
Նա քեզ մուֆթիա կը հասցնէր քու մուրազին:

Ես ինչ տեսնամ — սէլամ կուգայ հիւսիսէն.
Հայ մարդ՝ թէզով ժողվէ քու փաս ու փուսէն,
Ա՛ռ գրիչդ, քաշէ դէպի քու աշխարհ,
Քանի օրէն ունրդ բունրդ չես ճանչնար:

ԻՄ ՍՈԽԱԿԻՆ։

Սոխակ՝ ինչո՞ւ զարթեցար քու անուշ երգն երգելից,
Որ քամում էր արտասունք շատ իմ էրված աչերից.
Մինդեղ է երբ ծագում էր արշալույսը գարնային,
Քանի՞ դու միտս բերիր իմ առարկան ցանկալին..
Այն յիշատակն անոյշ էր, ինչպէս երազ վաղանցիկ,
Որ գէթ վայրկեան թշուառին դարձնում էր նա երջանիկ.
Համակ աշխարհ մոռացած, ունկս քու ձէնին յառած,
Արքով թռչում էի ես իմ հայրենին կարօտած...
Գիտեմ, դու էլ ես կարօտ մշտագարուն այն դրախտին,
Որից հետու մեզ չիկայ քաղցր ժրպիտ մեր բազդին.
Ո՞վ կուտայ ինձ թև թռչելի, որ խոյանան արքանան,
Օդն ու ամպերը ձեղքեն ու տանին ինձ Հայաստան.
Թէ նորա օդը շնչեմ, այն կենսատու սուրբ օդից—
Գիտեմ, փրկուելու եմ անբուժելի իմ ցաւից...
Գարունն անցաւ, ա՜խ սոխակ, խօսուն լեզուիդ կապ դրաւ,
Ու խնդձ վարդի թերթիկի հետ շարականդ էլ տարաւ։
Կրանամ դուռը վանդակիդ, աղաւաւթիւն քեզ կուտամ,
Բայց աղաչում եմ քեզի, թռիր դէպի Հայաստան.
Վարդ ես ուզում՝ այնտեղ է, անամպ երկինք, մեղմ հովեր,
Ճաճանչափայլ արեգակ, կարկաչաստահ առուներ։

Ես էլ քեզ պէս կարօտ եմ բնութեան պայծառ օրերին,
Մէգ, մառախուղ, հեղձուկ օդն հալեց, մաշեց իմ հոգին.
Փըչեց հողմը Հիւսիսին, փոշին երկինք բարձրացուց,
Կտրի վրայից ագռաւը խռպոտ ղաղան հնչեցուց.
Ահա՛ Հիւսիսի սոխակն, ահա՛ Հիւսիսի այեր..,
Ի՞նչ էք կորցրել Հիւսիսումն, ա՛յ խելացնոր խեղճ Հայեր
Ա՜խ, ես ատել եմ նորա կեանք ու վայելքը պատիր,
Տուէ՛ք օդը իմ երկրին, դալար դաշտն ու վարդ կարմիր։

ԳԱՆԳԱՏ.

31132
41

Ղարիբի սիրտն է խոց, ջիգէրն է վէրեմ,
Խըմած ջուրն է լեղի ու հացը հարամ.

«Կ—ՆՆԻ» Էրէ.

Հալածում է այլազգին ինձ իր բընիկ աշխարքէն,
Հիւրասիրութեան պարտքը իսպառ հանել է մըտքէն.
Ասում է «Հէ՞ր ես ունայն երկրէ երկիր թափառում,
Մի՞թէ փոքրիկ խորշ չիկար քու Հայրենի աշխարում»։
Ասացի թէ՝ անօրէնն կողոպտեց մեր Հայրենին,
Հայաստանի մէջ փոքրիկ խորշ էլ չի մնաց Հային։
Ասաց «եթէ մարդ չունի իր աշխարումն կայարան,
Չէ՛ նա մարդու հաշուումը, նորա կեանքն էլ է ունայն»։

Գոս. Պուճ. Ճոճ

Ասացի թէ՝ ես մահին շատ եմ կանչել, չի լսում,
Ասաց «դարձիր հայրենիդ, թէ դու մահից չես սարսում։

Պանդխտութեան օրերըս անցնում եմ լաց արցունքով,
Իմ հայ լինելուս համար մարդ չի տալիս ինձ բարով.
Մատով վրաս նշանց են տալիս, վրաս թափում են բիւր կատակ,
Իրար հարցանում են «Հայը ինսա՞ն է, թէ՞ նապաստակ.
Հայի երակների մէջ ջո՞ւր է վազում, թէ՞ արուն,
Թուր տեսնելիս զինչ մահից սարսափած հէ՞ր է վազում.

Հայի բայրաղի վրայ ի՞նչ էր գրրած՝ իմացէ՛ք.
—Թշնամիին տեսնելիս արագ ու հեռու փախէ՛ք.—
Մէկն ասում է՝ «Կրռուի մէջ հայի ո՞ր տեղն է խոցած»
Ժպիտը բերնին միւսը—մէջքն է անշուշտ անկասկած—
Մէկն ասում է «Հայ ազգի ի՞նչ էր զէնքը սոսկալի»
—Ամա՜ն, կեանքըս խնայէ՛ աղաղակելն խրղճալի.—
«Բաս ասում են որ հայը օր մի եղել է խիստ քաջ»
—Նա հիմի էլ էդպէս է, միայն...իր կնկայ առաջ—
«Ասիումը հընումը հայը հրզօր էր յիշվում...»
—Ի՞նչ զարմանք, երբ կուրերին միականին է իշխում,—
Այսպէս կրծու խօսքերով ինձ բարևում են օտարը,
Զընդան բանդ է իմ համար պանդխտութեան լուս աշխարը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱԲԵՂԱՑ.

Հյուսը ձեռին, գլխին վեղար, տէրտէրմեան համբելով,
Սուրբ աթոռից դէպի մի գեղ գընում էր նա շտապելով,
Միջորէի հեղձուկ տօթը տեղն տրվեց մեզմ զովին,
Բայց հայը սուրբը անզգայ էր բնութեան անգին պարգևին.
Թոռ և թռչնոց երամակքը պար բոլորած երգէին,
Հազարներանգ դաշտի ծաղկունք բուրումն 'ի վեր էնկէին,
Թոռ զեփիւռը զերթ հրեշտակի բերնէն ելած շունչ շունչէր,
Նորա սիրտը չէին գրաւիլ, նա բնութիւն սիրող չէր.

Ամբոր մոլոր ճանապարհ բռնած դէպի մի գեղ մենաւոր,
Աշխարքը էլ գար տակնուվրայ՝ բնաւ փոյթը չէր մեր սուրբ հօր.
Սեին տրված մի տրնակ կար՝ նա այնտեղ էր վրբազում,
Գուցէ բուրկէն, զով, գայլայլիկ էր անդ նորա սպասում....
Դնա՛, հայը սուրբ, ուր ձրգում է թափը բնութեան քու հոգին,
Միայն Աստուած է սրտագէտ, մարդ չիմանալ քու գաղտնին.

58479

Շատ շատ՝ պիտի բամբասուիս դու՝ այդ քեզ համար
չէ նոր վիշտ,
Մարդկան ազգը շարլեզու է, էր, և կ'լինի այդպէս միշտ,

Հողե՞մ գլուխը բամբասողին, ճշմարտութիւնն բարուղ է.
Խոնարհեցո՛ ունկդ, հայր սուրբ, երկմտութիւնս իմ մեկնէ.

Քեզ ո՞վ ստիպեց աշխարհ մոռնալ, ուրանալ տուն, ազգական,
Արհամարհել անմեղ վայելք, կեանքդ սեցնել յաւիտեան.

Քու ամուլ մօր ուխտի զոհն ես—զոհ գոմանի հրլութեան,
Թէ՞ դու կամաւդ խոստմունք արիր — զոհ կարճամիտ մանկութեան.

Կրօնէն աւել չուններալով հրզոր պաշտպան աշխարքում—
Արդեօք կեանքիս վի՞շտք ստիպեցին պատսպարուել քեզ վանքում,

Թէ՞ Սիկատոսի օրինակէն հրապուրելով քու հոգին,
Դու կամեցար նոր ուղղութիւն, նոր կեանք շնորհել քու ազգին.

Թէ՞ (ա՞խ լեզուս կարկամիլում է), էիր պղերգ պատանի,
Եւ այրական հասակդ առած՝ չեզար մարդոց պիտանի,

Ընուս, անինչ, անգործ մնալով ծափ ծիծաղն ընչաւակ,
Թրշուառ գլուխդ վայ կարդալով շատոնց նրման մը-
տար վանք.

Թէ՞ քու հոգին ծարաւի էր մի այլ աղբիւրի ջրերին,
Որի ակը պահած գիտցար ետեւն վանքի պատերին,
Ջուր եմ ասում, որ խրմեցին սուրբք՝ Եղիշէ ու Մովսէս,
Ղազար, Մամբրէ, Կորիւն և Գիւտ, նոցա հետ էլ
շատ Ներսէս.

Գրտա՞ր արդեօք որոնածդ, նրպատակիդ դու հասա՞ր,
Թէ՞ ոսկի ցնորք փարատեցան և դու ուխտիդ փոշմանցար
Գո՞հ ես վանքի սուրբ աղբերէն, երջանի՞կ է քու անձը,
Գերդաստանի հոր վիճակը չի շարժում քու նախանձը..
Բայց երբ մենակ խրցիդ մէջը նրստած՝ մաշտոց ես
կարդում,

Հէր աչերդ գրքին յառած՝ միտքդ հեռու է թռչում,
Ինչո՞ւ գիրքդ վեր է ընկնում, մութ կոխում է աչերդ,
Ինչո՞ւ յանկարծ պէծպէծի են տալիս դեղնած թրշե-
ռքդ....

Հայր սուրբ՝ ես քու աջին զուրան, թէ յոյսերդ չես
խաբուել,
Եւ աշխարքս ուրանալով՝ դրախտի շաւիղն ես գրտել,
Երբ դու մի օր հանդիսանաս հոր երկնաւոր աթոռին,
Բարեխօս լեր վասն հոգւոյ քեզ այս խօսքերս մաղ-
թողին։

ԱՂԱՍԻ ՄՕՐ ԵՐԳԸ։

Զարթիր, մանուկ իմ նազելի, բաց այդ պայծառ աչերը,
Թերթերունքէդ քունը թօթուէ, գիրկը հանգիր քու մօրը.
Բաւ քեզ որքան բարի հրեշտակք հեքաթ ասին երազում,
Այժմ արի՛ քեզ այն պատմեմ, ինչ պիտ՝ տեսնես աշխարհում։

Զարթիր, որդեակ, քանի՞ քընես,
Բաց աչերդ այդ նախշուն,
Ուր որ մայրդ իւր բաղդ, փառքը,
Կեանք ու արևն է տեսնում։

Դուն կըմեծանաս, բայ կըքաշես—չինար բայիդ ես զուրան,
Քեզ ուժ կուտան Մասսի քաջքը, որ դու լինիս քաջ Վարդան,
Իմ մատներով մի ոսկեթել մէջքիդ գօտի եմ կարել,
Գօտիիցդ թուր կըկապեմ, այն էլ ինքս եմ սըրել։

Զարթիր, որդեակ, քանի՞ քընես,
Բաց աչերդ այդ նախշուն,
Ուր որ մայրդ իւր բաղդ, փառքը,
Կեանք ու արևն է տեսնում։

Մեր բակումը ձի է կայնած՝ քեզ է մընում անհամբեր,
Զարթիր, որդեակ, քանի՞ քընես, ա՛ռ քու թուրը մահարեր,
Քու հայ ազգը հեծեծում է, ձեռքը, ոտքը շղթայած,
Քու եղբարքը գերութեան մէջ... քա՛ջ, միայն դո՞ւ ես քընած...

Զարթիր, որդեակ, քանի՞ քընես,
Բաց աչերդ այդ նախշուն,
Ուր որ մայրդ իւր բաղդ, փառքը
Կեանք ու արևն է տեսնում։

Զէ՛, իմ որդին շուտ կըզարթի, ձին կըհեծնէ սանձակոծ,
Հայի արցունքը կըսրբէ, կըդադրացնէ լաց ու կոծ.
Հա՛յ եղբայրներ, քիչ էլ կացէ՛ք, իմ Աղասին զարթեցաւ,
Գօտին կապեց, թուրը կախեց ու իր նրժոյգ ձին նըստաւ։

ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՆՔԸ։

Մայր Արաքսի ափերով
Քայլամոլոր գընում եմ,
Հին հին դարուց յիշատակ
Ալեաց մէջը պըտրում եմ։

Նայց նոքա միշտ յեղյեղուկ
Պըղտոր ջրով եզերքին
Դարիւ դարիւ խփելով
Փախչում էին լալագին։

Արաքս՝ ինչո՞ւ ձրկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չի հասած
Սըգաւոր ես ինձ նըման։

Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քու սեգ հրպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից։

Մի պըղտորիլ յատակըդ,
Ջանդարտ հասէ խայտալով։

Մանկութիւնը քու կարճ է,
Շուտ կը հասնիս դէպի ծով։

Ալարդի թըփեր թո՛ղ բըսնին
քու հիւրընկալ ափի մօտ,
Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչև առաւօտ։

Մշտադալար ուռիներ
Սառ ծոցի մէջ քու ջըրին
Ակուն ոստն ու տերև
Թո՛ղ թաց անեն տապ օրին։

Ալիներդ մօտ երգելու
Հովիւք թո՛ղ գան համարձակ,
Գառն ու ուլը քու վըճիտ
Ջուրը մըտնին միշտ արձակ։

Մէջքը ուռցուց Արաքսը,
Փրփուր հանեց իր տակից,
Ամպի նըման գոռալով
Էապէս խօսեց յատակից։

Խիզա՜խ անմի՜տ պատանի,
Ինչի՞ դարևոր
Վրդովում ես նորոգում
Իմ ցաւերը բիւրաւոր։

Սիրելիի մահից յետո
Ե՞րբ ես տեսել, որ այրին
Ոտքից գլուխ պրճնուի
Իր զարդերով թանգագին։

Որի՞ համար զարդարուիմ,
Որի՞ աչքը հրապուրեմ,
Ճառերն ինձ են առել,
Ճառերին ես օտար եմ։

Իմ ազգակից գիժ քուռը,
Թէև այրի ինձ նըման,
Ըստրկօրէն տանում է
Գայթագղելի կուռ շղթան։

Բայց նա ինձ չէ օրինակ,
Ես Հայ՝ հայիս կըճաշնամ,
Օտար փենայ շուզելով,
Ես միշտ այրի կըմընամ։

Կար ժամանակ, որ ես էլ
Շըքեղազարդ հարսի պէս
Հազար ու բիւր պըշրանքով
Փախչում էի ամիներէս։

Յատակս պարզ ու վըճիտ,
Կոհակները՝ ոլորուն,

Լուսաբերը մինչև այդ
Ջրերիս միջին էր լողում,
Ո՞նչքա՜ մընաց էն օրից,
Ո՞ր ջրամոտ գեղերքս,
Ո՞ր իմ շէն քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերքս։

Տուրքը ջրի ամեն օր
Իր սուրբ ծոցէն Արարատ
Մայրախընամ ինձ սընունդ
Պարգևում է լիառատ։

Հայց ես այն սուրբ ջրերով
Սուրբ Ակոբի աղբիւրին
Պիտի ցողեմ արտորայքն
Իմ առելի օտարին։

Կամ՝ կենսատու իմ ջրով
Ափերիս մոտ կրկզած
Իւր նամաղը կատարէ
Թուրք կամ պարսիկը հոտած։

Մինչ իմ որդիք—ո՞վ գիտէ—
Ծարաւ, նօթի, անտէրունչ
Օտար աշխարհ՝ յածում են
Թոյլ ոտքերով կիսաշունչ...

Հեռո՛ւ հեռո՛ւ քրշեցին
Բընիկ ազգը իմ Հայկեան,

Նոցա տեղը ինձ տուին
Ազգ անկիրթն, մոլեկան։

Դոցա համար զարգարեմ
Իմ հիւրընկալ ափերը,
Եւ կամ՝ դոցա հրապուրեմ
Ճիպռոտ, պիլլած աչերը։

Քանի որ իմ զաւակունք
Այսպէս կու մընան պանդուխտ՝
Ինձ միշտ սրգաւոր կլսեանէք,
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ...

Լոյ շինիսցեց Արարքը,
Ցորձանք տուեց ահագին
Օղակ օղակ օձի պէս
Առաջ սողաց մոլեգին։

* * *

Թէ իմ ալեոր հերքս սևնային,
Այժմ ինձ յետ դար, կլսրիճ դառնայի.
Նիժոյդ ձի նիստած, բեխիս ոլորած,
Ձեռիս թուր առած ես դաշտ կերթայի.
Ես դաշտ կերթայի—դաշտ Աւարայրի,
Ողողած ցողած Հայոց արիւնով,
Ա՛զգ իմ սիրական, դու ազգ Թորգոմեան,
Քու կորցրած թագը քեզ յետ կուտայի։

Կ'ասէի Հայոց օրիորդներին
Ծաղկեցէք հագի ձեր թանգ շորերը,
Թողէք պաճուճանք, զարդ, մարգարիտներ—
Ժանգոտած ու գուլ են մեր թըրերը,
Տուէք բնհեղեայ մեզ ձեր շապիկը,
Որ մենք փաթաթենք մեր մարմնու վէրքը,
Վիրակապ հիւսէք գուք ձեր մազերից.
Ապպէս յայտնեցէ՛ք գուք մեզ ձեր սէրը։

Եթէ ես լինէի հարուստ մեծատուն՝
Սընդուկներըս լի ոսկով արծաթով,
Շատերու նման ես չէի լինիլ
Երբէք աղգասէր ունայն խօսքերով,
Շամպանեա գինու Ա... Խ... տեղ
Կ'առնուի առատ գնտակ ու վառօտ,
Արձակ համարձակ կ'երթայի հանդէպ
Հայատեաց ազգին անթիւ զօրքերով։

Եթէ ես լինէի մի երկրի իշխան՝
Կուտայի զօրքիս սաստիկ հրաման,
Շուտաքայլ երթալ դէպի Հայաստան,
Խըղճուկ հայ ազգին լինել օգնական.
Եւրոպ՝ Ասիա արեան գետերը
Կըմաղեցնէի հեղեղի նման,
Մինչև որ թագ, գահ ու ազատ կըրօն
Ինձնից չիստանար թշուառ Հայաստան։

Բայց՝ եթէ մի օր, մի ժամ, մի բոպէ
Ստուած լինէի մեր հողագրնտին,
Ի՞նչ սուր սրբաքներ պիտի շաղ տայի
Մեր արենարբու թշնամաց գլխին.
Ենգ. . . Թուրք մոլի, Պարսիկ ոխերիմ,
Դարևոր ոսոխ գու Ցոյն կրօնամոլ,
Գիտցի՛ք որ՝ իմ սուր երկսայրի սրբից
Անվնաս չէր մընալ ոչ մի ձեր որդին։

ԴԵՒ ՄՐՈՒՍ։

Ա՛յդ ի՞նչ շրխոմ, ի՞նչ աղմուկ, յուսակրտուր վայ ու լաց
Տատարակ տիրել է Տարտարոսին զաւակաց.
Ելեռուել են գեհենի, այն պարիսպքը սարերէ,
Ջախջախուել են շղթայքը անդամանդեայ քարերէ.
Թէ՞ Սատիրսը ցամքել է թէ՞ Ակիրոնն է հիւանդ,
Թէ՞ Կերբերի տեսիլքը, ծերութենէն այլ չէ ժանտ։

Ո՛չ, գեհենի պատերը պինդ անխախուտ են կանգնած,
Ոչ շղթայքն են ջախջախուել եւ ոչ Սատիրն է ցամաքած.
Առաջուայ պէս Կերբերը դուռը արթուն է պահում,
Ակերոնը անցուդարձ նաւով Սատիրն է անում.

Այդ փանաքին առթերէն չէ գեհենի աղմուկը,
Այդ փանաքին առթերէն չէ գևերու լաց սուգը։

Պրժոխքի մէջ դահիճ կայ—խորհրդարան է շարաց,
Եօթն աթոռի մէջ տեղը կրլոր սեղան է դրրած,
Թուով եօթն են բաղմականք՝ եօթն մեղաց համարաւ,
Որին մինի մատ լուռ ու մունջ տրխուր նրստած են կար-
գաւ.

Թէ և լուռ են բայց անիսաս խորհուրդ խորհին շարերը,
Թէ խորհուրդը գործ դառնայ՝ կրկործանուին սարերը։

Ալղբարք, ասաց վերջապէս Բեհեղզեբուղ ծերունին,
Ձեր ցանկութեամբ և կամքը ես այց եկայ մեր երկրին,
Ինչ կար շրկար նորա վրայ՝ ամենն աչքէ անցուցի,
Բոլոր տեսածս ու լսածս՝ մանրամասն գրեցի.
Իմ գրրուածքի մեծ մասը վաղուց եմ գրով հաղորդել,
Արնացորդը ուզում եմ բերանացի ձեզ պատմել։

Հայաստանն էր վերջին իմ այց եկած աշխարքը.
Այլ ազգերէ խիստ տարբեր է հայոց վարքն ու բարքը.
Ժողովուրդն է միամիտ, կրրծնասէր, հեզ, խոնարհ,
Խաղաղասէր, ժրաջան ու շատ սիրում են իրար.
Հոգևոր հարց յարգելով՝ սատանեերքին են ատում,
Խունկ ու զրմուռս ծրխելով՝ սատրիկ են մեզ հալածում։

Սատով գինին խմելիս՝ Հայք միշտ Աստուած յիշում են,
Խրուվարկու հարրոդին խրնջոյրիցը քրշում են.

Երգ սիրում են — հոգևոր, խաղ սիրում են, — բայց անմեղ,
Միով բանիւ՝ և՛ ըզգաստ և՛ խելօք են ամեն տեղ։
Այժմ ասէք, սիրելիք, ի՞նչ յոյս ունինք այն ազգէն,
Որի ամեն անհատը գիտէ փախչել մեր ձեռքէն։

—Ռեհեղեբուղ դու յիմար, Ընամելեքը ասաց,
(Որ խորհրդի ժամանակ լուռ անմրուռնչ էր նըստած)
Զարմանում եմ քու խելքին, որ այդ շնչին համբաւով
Շըփոթեցիր ամենիս ու լըցուցիր տագնապով.
Ասենք թէ՝ հայք զգաստ են, իրանց կրօնին մներիմ,
Միթէ ուրիշ հնար չի կա՞յ, որ հայք դառնան մեր գերիներ։

Օրորինակ՝ հայերը բնութեամբ խիստ տրուփոտ են
(Եւ ո՞ւմ սիրտը անթափանց է սիրոյ սուր նետ
Թ՝ Եղլատաէն շնորհաշուք գան Հայաստան աղջիկս.,
Այնուհետև տե՛ս քանի՞ պիտի քանդուին տներ.
Ուր սէր էր՝ անդ քէն կլինի, սուրը կ՚շարժի իր տեղէն,
Սար ու ձորեր կըլցուին հայոց արեան հեղեղէն։—

Հա՜ հա՜ հա՜ հա՜, ծիծաղեց Ռեհեղեբուղ ծերունին
(Դորա բարձր ծիծաղէն դրունք սարսեցան գեհենին)
Գեղեցկութիւնն հայ կնկայ բաղդատելով այլ ազգաց
Այնպէս գիտցի՛ր, ինչպէս որ լուսինն հանդէպ աստեղաց.

Շրջեց, նաղուք հասակաւ, թուխ ու գանգուր մազե-
բով,
կէս ամնուայ լուսնի պէս շողշողում են պատկերով։

Մ՚ի՞թէ Հային կոյր գիտես, կամ թշնամի իր անձանց,
Որ սոսկ քարը գոհարէն կարծեն նոքա գերազանց.
Չէ՛, այդպէս չէ՛, սիրելս, Հայի աչքը շատ սուր է,
Հային յիմար կարծողը՝ երկու աչքով էլ կուր է.
Ուրիշ միջոց, ուրիշ հնար ևկ աշխատանք գտնելու,
Այդ բաներով չէ՛ երբէք մեզնից Հայը խաբուելու։

Այս լսելով գնեցին մինը՝ Մրջուս անունով,
Որ դրպիրն էր ատենին, անդէն եկաւ անխրոով,
Աչքը գարձուց իր շորս գին սովակատաղ վագրի պէս,
Դրժոխաշունչ բերանէն անէծք թափեց լիապէս.
Նորա լայնդիր ճակատը՝ գահ էր եօթից յանցանաց.
Սոսկալիթխար հասակը՝ ահարկու էր և՛ գիւաց։

Այս այն չարակամն էր ազգիս, որ Արամայ օրերէն
Խղճուկ Հայը օր չունի նորա անողորմ ձեռէն,
ա այն ծնունդն է անիծից, որնոր պէտպէս գիմակաւ
Չիմն ի վեր կործանելու շուտ շուտ Հայաստան եկաւ.
Մ՚երթ Վասակ էր անունը, մ՚երթ Պապ էր, մ՚երթ Մերուժան,
Մ՚երթ Ցաղկերտ էր կրակամոլ, մ՚երթ մոլեգին Զարմաղան։

Դրախտանմանն Հայաստան սպանդ դարձուց սոսկալի
Ու անհովիւ հօտի պէս թողուց Հայոց ցաւալի,
Ոբք արգաւանդ դաշտերում կարօտ էին չոր հացին,
Աղքատաստ այն երկրում ծարաւատանջ մընացին,
Արտասուքով ցօղեցին կանանչազարդ ձորերը,
Անմեղ արեան հեղեղով ողողեցին փոսերը։

Հայի բնութեանը տեղեակ՝ նա գուժկանի խօսքերէն
Զ'այլայլեցաւ այլոց պէս. միայն եղաւ իր տեղէն,
Խօսքը դարձուց գեղերուն, մրխիթարեց, բսփոփեց,
Փոքրիկ մի ճառ կարդալով՝ խօսքերը պսպէս աւարտեց.

«Մինք երկնչել, բարեկամք, քանի որ կամ ձեր միջին,
«Հատ մահացու վերքերով կրխոցոտենք մենք Հային»։

Պրծաւ այսոց ատեանը։ Ամենքին միամիտ
Դարձան իրանց գործերուն ու խորհրդին շարամիտ։
Իսկ Մերուսը անյապաղ ու հապճեպով մրտաւ կառք,
Տարտարոսի խաւարէն իսկոյն մրտաւ լոյս—աշխարք։
Ծիծաղելով աչքերը դարձուց դէպի Արարատ,
Ասաց «ատ իմ մանգաղին ըսպասում է հունձ առատ»։

Ա՛ւա քաջ գիտէր, որ Հայը յանուն իր տուրբ հաւատին
Միշտ պատրաստ է զոհելու գանձը, տունը և որդին,
Աւանդութեան մրտերիմ իր պաշտելի հին նախնեաց
Համայաւասար սրբերուն յարգում է հոգեւոր հարց,

Ուստի՝ հագաւ փաթաքա, աջ ձեռամբ գաւազան,
Տէրտէրմեան ձախումբ,—այսպէս մրտաւ Հայաստան։

Սա իր ճերմակ մազերով ու բընութիւնով խոնարհ,
Ծրուած վիզով, հեզ դէմքով ու մարմինով նիհար
Շուտ գըրաւեց ամենի խելքը, միտքը ու հոգին,
(Այսպէս միշտ հեշտ խաբուել է Հայը ձեռով արտաքին)։

Դեռ Մըրուսի հրուշակը՝ Սուրբ Գրիգորին հաւասար
Ծաւալեցաւ, սփռեցաւ ամեն հեռաւոր աշխարհ։

Ա՛յդ՝ Մըրուսը ի՞նչ արաւ։ Նա իր խօսքը կատարեց.
Տարտարոսի երկիւղը տասը տարում փարատեց,
Ուր որ գըրեց իր ոտքը՝ աղմուկ դարձուց ամեն տեղ,
Հօրն ու որդուն կռուեցուց, ինքը մընաց միշտ անմեղ,
Անթիւ կասկածանք ցանեց նա միամիտ սրտերում,
Սէր ու հաշտութեան տեղը՝ թողեց նախանձ, շարութիւն։

Հայք իրարմէ հեռացան. առանձնութիւն սիրեցին,
Զանձրութիւնը ու վիշտը շատ մոլութիւնք ծընուցին.
Զուարթ բարքը առաջուայ խապառ կորաւ Հայերից,
Ուրախութեան, սիրոյ երգ՝ հատաւ նոցա բերանից։
Ե՛զարքը՝ ինչո՞ւ տիրեցին մեզ այսքան վիշտք, այսքան ցաւ։
Ընդուր համար որ՝ մեր մէջ Մըրուս—Դեմը յայտնեցաւ։

ՔԵՈՒՐՈՂԼՈՒ

ԲԸՆԸՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ.

(ԱՆԻ-ԳԻՐ).

—

1. ՆԱԽԵՐԳԱՆՔ.

Ընկաջ արէք՝ Թարիփ անում Քեռօղլուի քաջ արարքը.
Քեռօղլուին շատ են սիրել մեր պապերը ու մեր հարքը.
Ո՞վ չըգիտի Քեռօղլուի անմահական գործքն ու բարքը,
Մինչ էս օրըս աշուղները մէջլիսի մէջ նըրա վարքը
Պատմելով՝ մոռացնում են լըսողներուն դիփ աշխարքը՝
Մայիսի ըբլբուլ էին նըրա շունգրի անուշ լարքը.

Նըրա նետը զանազ ունէր՝ դուզ հասնում էր մինչ ամպերը,
Նըրա թուրը անդամանդի՝ կըտորում էր արկաթները,
Հայելու պէս պրսպըղուն էր նըրա հատու սուր խանջէրը,
Ի՞նչ է ժանգը՝ չէին խարար նըրա զէնք ու զըրահները,
Մինչ էս օրըս սարսափում են Սուլթանի խեղճ նոքարները,
Ցիշելով Քեռօղլուի անցած գընացած գործերը.

՝Նրբան անկեղծ սիրում էին Հայը, Թուրքը ու Պարսիկը,
Թէ զուշմանը, բարեկամը, ջահէլ տղէն ու աղջիկը.
Սիրապրծութեանը նրբա ու մեծանձնութեան խարիկը
Բարձր Եալբուզ սարից բրուռնած՝ անցել էին մինչ Հնդիկը,
Հազար հոգի անջաղ ունէր նրբա հեծուոր քաջ գընդիկը,
Աշխար կ՝անէր տակնուվերայ, թէ չէր խաւրել շուտ աստղիկը։

Ընկաջ արէք քօռ աշուղիս՝ ձեզ հրաշալի բան եմ ասում,
Ջահէլ տըղերք լաւ ուշկ դրէք՝ զարմանալի բան եմ ասում,
Սիրուն կուսանք՝ լաւ միտք դ՛րէք՝ արտասուելի բան եմ ասում,
Յարգոյ ծերեր՝ ինձ լըսեցէք՝ ձեր պապերու բանն եմ ասում,
Հայ քրիստոնեայք, ազգի իշխանք՝ խորհրդաւոր բան եմ ասում,
Ուշկով միտքով ականջ դիրէք՝ ձեզ ամենիդ բան եմ ասում։

2. ԱՇՈՒՂ։

Աշուղն լեզուն գրիչն է ասում ամեն մի բանին,
Իր անմեղ հոգին օսկով չի ծախում նա Վամենային,
Միշտ մեկն է ասում նա՝ թէկուզ նարին, թէկուզ գուշմանին,
Չի վախում խօսել գրիչն առաջի ահեղ առանին։
Աշուղն ամենի խաթրին գլուխը զուրան է գընում,
Տիրած որ տեսնի՝ ինքն էլ նրրա հետ անկեղծ է տիրում։
Ծիծաղողի հետ ինքն էլ է իսկոյն ուրախ ծիծաղում։
Հաղով ծընել է մորը արգանդէն, հաղով է մեռնում։
Աշուղը թէկուզ նաշուքն իլի հարուր տարեկան,
Նրրա միամիտ պարզ հոգին մընում է միշտ մանկական.
Խօջա ու քեսիբ, տէր ու ծառայ են նրրա սիրական,
Հաւասար մարդ են՝ թէ կուզ քրիստոնեական, թէ մահմեդական։
Վառ արեգակը ամենի համար լուս է ու պայծառ,
Միայն աշուղին ցերեկուայ մէջն էլ մութ է ու խաւար,
Մութն է աչքերը, բայց լուս է հոգին, սիրուն է բոցավառ,
Քանց գրրագէտէն լեզու ունի նա անուշ ու ճարտար։

3. ՔԵՕՈՕՂԼՈՒԻ ՍԱՐԸ։

Էս բանձր ժէռուտ սարի գագաթան բազմ է նրստած,
Թէ էծը վայրի ջըլտա ոտներով է էնտեղ հասած.

Ամպի կըտոր է կըպել երկնամերձ էդ սարի ծայրին,
Թէ՞ ծառ կամ մացառ բրմնում, աճում են յանբը-
նակ վայրին։

Ո՛չ ծառ և ոչ բոյս, ո՛չ թեւաւոր և ո՛չ անթաւուն
Կարող են հասնել ոտով կամ թեւով էդ սարի գլխուն.
Էդ սարի օդէն մենակ մէկ մարդու դօշն է ծրծել,
Էդ սարի գլխուն մենակ մէկ մարդու ոտն է կոխել,
Աբրնեթաց Ռաշտի ոտքն էդ սարում ճանփայ է բացել,
Ու Ռաշտի նալը նրբա կըշտերից կըրակ է հանել.
Բայց այժմուս չի կայ, ոչ մարդը, ոչ ձին էդ սարի
վրէն,
Լոկ քամին ազատ իջնում է էնտեղ ամպի մէջերէն,
Ու լուսնի շողքը պայծառ գիշերուն հանդարտ ու հե-
զիկ,
Մարդոցմէ թաքուն պար են բոլորում զինչ անմեղ
մանկտիք.
Ու սարի քաջքը գիշերուայ մրթին վրհուկներու հետ
ճրչում, ոռնում են, յետոյ յօրինում կապաւ անհե-
թեթ։
Մոլորուած ճանփորդ՝ շուտով հեռացիր ահաւոր տեղէն,
Քրչէ՛ ձիդ առաջ, խանջէրդ հանէ՛ արծաթ պատենէն,
Տեսնում ես բերդը էդ սարի գլխին. շար դևի նրման
Հազար բոցեղէն շանթեր կու շաղէ բերդէն քու վրան.
Զրգիտե՞ս քանի որ դիւաբընակ էդ սարի գլխուն
Քաջ Լաշքնարովը իր բուն է դրել ահեղ քեռօղլուն.

Ճանիէդ էրկար է առաջիդ, ո՛վ մարդ, սրտանց աղօթէ,
Որ քու Աստուածը մեղաւոր հոգիդ մահէ ազատէ։

4. ԲԱԶՄԱԿԱՆԵ ԽՆԴՐՈՒՄ ԵՆ ԱՇՈՒՂԻՆ, ԱՍԵԼՈՎ

Ա՛շուղ՝ բըլբո՞ւլն է քեզ աւանդել իր քաղցր լեզուն,
Քրովբէ՞ն դիպել իր սուրբ մատերով քու սիմ լարերուն,
Քու սուրբ բերանո՞վն եարաբ, խօսում է Ալքան իմաստուն,
Անցածն ու գալուն քեզ ո՞վ է յայտնել ո՞վ անուս գիտուն։

Դիպչէ մատերով արծաթ լարերուն խօսնակ չունգուրին,
Անշունչ թելերուն շո՛ւնչ տուր, խօսեցո՛ւր լեզուով մարգկային,
Թո՛ղ պատմէ մեզի գործքը դիւցազանց անցած դարերին
Ո՞վ էր բնակիչը էդ դիւաբընակ վայրի սարերին։

5. ԱՇՈՒՂԸ ՊԱՏՄՈՒՄ Է

Սուլթան Մահմուդ բըռնաւորը օրէս էրկու դար անցած,
Ղըզլբաշի մեծ տէրութեան ոսկէդահոյքն էր նստած.
Նորա ղօշում նօքարներու թիւը չիկար, հիսարը,
Անպատմելի զալըմ մարդ էր ասում է հին քիթաբը։
Էր է խըռով ժողովուրդը գոռող մահմուդ Սուլթանին,
Մէկզմէկով խըռնուած են ինչո՞ւ պաշտօղք ղուրանին,

Ի՞նչ է հարցնում բազմութիւնը էդ խուժադուժ իրարից,
Զիլի՞ Շահին շար խաբար է հասել իշխան խաներից,
Զիլի՞ քուրդը վերայ տուել, թալանել է Հէրաթը,
Զիլի՞ Վիրքը զօշում առած՝ հասել է մինչ Սէհրաթը.
Մէկանց երեսն ուրախ, զուարթ, միւսներին խիստ տրըտում,
Կէսը հա՜յ հա՜յ, կէսը վա՜յ վա՜յ. ասում, լալիս ու խընդում.
Ղզլբաշն է հա՜յ հա՜յ ասում, վա՜յ ասողը խեղճ Հայն է,
Վայ վագլախը մեր խեղճ ազգի քամբաղդ կեանքի կէս փայն է.
Վայ ասելով օրը մաշեց, լուս արևը մրթացուց.
Վայ ասելով թագը կորուց, ձեռի թուրը ըրթացուց.
Ա՜խ ազգի վայ, ի՞նչ ոգը կարդամ էդ անիծած քու ձէնին
Քեզ ո՛վ ցանեց Հայու երկրում, որ պինդ կրպար մեր արտին.
Կուլի՞ եարաբ մէկ օր. երբ դու խապառ կորչես մեր մէջէն,
Կուլի՞ օր մի, երբ ցաւք ու դարդը Հայի հոգին չի տանջեն.
Ամմա. . . . աչքրդ շո՛ւռ տուր, նայէ՛ դու էս էրկու քամբաղդին,
Մէկի աչքը արտասուալի, արնաշաղախ միւսին.
Որ լալիսն է արտասունքով թրխամազ է ու ջնհել,
Իսկ մէկէլի գլխուն վաղուց տարիքն իր ձունն է ցանել. . .
Պատմութիւնիս միտքը կարճ է. Շահը խիստ էր բարկացել
Իր նոքարի վերայ, իսկոյն հրամայել էր կուրացնել.

կուրացնել էր նա հրամայել, սրբատեսին կոյր դարձնել,
Ա՞խ, գիտէք դուք, հասկանո՞ւմէք թէ ի՞նչ բան է կոյր
ասել.

6. ԿՈՒՐԻ ՀԱՂԸ։

Ղունգուր իմ խօսուն՝ դու թարիմին արա՛ խեղճ կուրի
հալը.

Օրենը քանի՞ անիծում է նա իր աշխար՝ գալը.
Ի՞նչ է պէտք նրբան աշխարքիս գանձը, հարբստի մալը,
Աղամ չե՞ն հաւսար թէ փշրած շուշէն, թէ անգին լալը։

Արևի շողքը կուրի էրեսը էրում է էրում,
Կուրը արևի տեսքին համաշա հասրաթ է մընում.
Երկիր ծաղկազարդ, երկինք աստղազարդ՝ երազ են թը-
վում

խեղճին. հաւասար մութ են՝ լոյս ցերեկ, խաւար իրի-
կուն։

Պարուն է գալիս, փրռում է գետնին նախշուն խալիչան,
Կոչունք է անում, մէջլիս են գալիս հաւեր զանազան.
Ծաղկունքն էլ գալիս կանանչու կարմիր՝ նոր հարսի
նրման,

Գարնան մէջլիսին անհրաւեր մընում է կոյրը միայն։

Օրը մթնում է, թռչունը քոչում է երկնից դիմակը,
Հազար կումանից շախմախ է տալիս ամպից կէծակը,

Կանանչ-կարմիրը կամար կապում է ծագից ի ծագը,
Մ'բայն խնդմ կուրի համար անտես է Աստծու փառքը։

Հէրն ունի որդի, մէրն ունի ախչիկ՝ նազլու ու սիրուն,
Զաւակն ծնօղաց էրիսն նայելիս՝ խնդում է, ցընծում,
Ծնօղն զաւակի վրէն նայելիս՝ ինչան ա տեսնում.
Ինչ շահ է կուրին, թէ ունի զաւակ՝ տեսնել չէ կարում։

7. ԶՐՈՒՑ ՀՕՐՆ ՈՒ ՈՐԴՈՒ ՄԷՋ։

Ծերը ասաց ջահէլ տըղին«Տես աշխարքիս քօռ բաղդին,
Քըսան տարուայ աշխատանքիս վարձն այս էր, վայ իմ գըլխին.
Ո՛րդեակ, ինչ որ հիմի տեսար՝ մըտքիդ պահէ յաւիտեան,
Եւ ինչ որ քեզ պատմելու եմ՝ չի մոռանաս ցօր մահուան։

Լըսէ՛ իմ որդի, լըսէ սիրական,
Արտի դարտները հօրդ չուառական,
Լըսէ՛ դու ուշկով հօրըդ զըրուցին,
Ու մի՛ մոռանար մինչ շունչդ վերջին.
Վառվում է սիրտս բոցով գեհենին,
Արտունքս եռում դամարիս միջին.
Հոգուս մէջ ոխը դադար չէ տալիս
Ինձ ո՛չ օր ցերեկ, ո՛չ ժամ քընելիս.
Ա՜խ, ես այս օրուան պիտի հասանէի,
Դուշմանիս մինչ վերջ յաղթող տեսանէի,

Ինչո՞ւ պակսեցաւ ուժը իմ սրտէն,
Որ սուր չառի ձեռս դուշմաններուս դէմ։
Քանց այսպէս թշուառ օրեր անցնելը
Բիւր պատիկ լաւ չէր փառքով մեռնելը.
Ո՜հ որդեակ, որդեակ, անիծիր դու մի՛
Ալեոր հօրդ օրերն ցաւալի.
Բա՛ւ է, որքան ես զբլուխս եմ լացել,
Արուն արցունքով մահիճս եմ թացել,
Մի՛ դու էլ նորից անիծիր ինձ, մի՛,
Արեւուդ մատաղ, աղիզ իմ որդի.
Լսէ՛, իմ որդի, լսէ՛ սիրական,
Սրտի դարդերը հօրդ չուառական։

ԲՈՒՆԻ ՊՍԱԿ։

Լուսադէմին աղբիւրի մօտ գընացի,
Սառը ջրով ձեռք, երեսս լուացի.
Հանգստացայ ծառի թաւուտ ստուերումը.
Թռչունները ճլվում էին վերումը.
Մինն նոցանից տխուր, մենջիկ երգում էր.
Ու երգելիս մարդու ձէնով ասում էր
«Խեղճի՛կ նաղլու, քեզ բերել եմ սև համբաւ
Այսուհետև քու քաղցր արևը կորաւ,

Քու հէրիկը արծաթասէր, քարէսիրտ,
Զի խնայելու անգին օրերը խեղճիդ.
Ծերուկ, կնճռոտ նա քեզ փեսայ ընտրել է,
Քու փեսան քեզ հօրէդ փողով գընել է։

Մէրիկ, ինչ՞ եմ ես լսում, վա՜յ գլխուս.—
«Աղջի՛կ, հօրդ գործն է այդ, աչքի լուս»։
—Հէրիկ, ղո՞րդ է, ինչ լսեցի, վա՜յ գլխուս։—
«Թո՛ղ աղբէրդ ղորդը ասէ, աչքի լուս»։
«—Աղբէ՛ր, ինչո՛ւ տալիս են ինձ ծերուկին։—
«Արծաթասէր մեր հօր գործն է, իմ անգին..
«Քիսով ոսկին ջըհուտ ծերը տուն ըներց,
«Անգին քըրոջ, աղիզ քըրոջ նա գներց»։

Մնա՛ք բարև, տուն, ազգական յաւիտեան,
Ոսկի օրըս սեցնելու է իմ փեսան,
Դուք երկնային ազատ թռչունք մի՛ երգէք,
Անցած օրերս դուք ինձ ի յուշ մի՛ ըներէք.
Այսուհետև իմ կեանքն է ինձ գերութիւն,
Մահը միայն տալու է ինձ փրկութիւն։

—Ա՛ռ ամոռը, նստէ՛, ուտենք միասին,
Ասաց գոռոզ ծերուկ փեսան նոր հարսին.
Մաղն ու ունքը նորա ճերմակ ինչպէս ձիւն,
Ու աչքերը բոց կըրակի պէս փայլուն.

Ես քեզ շատուց սիրում էի վառ սիրով,
Արդ՝ դու իմն ես, ու ես հանգիստ եմ հոգւով.
Ե՛կ քեզ ցոյց տամ իմ պահած փողն ու գանձը,
Քեզ կ՚ընծայեմ այն բոլորն ու իմ անձը։—
«Քա՛ւ, քեզ պահէ՛ բոլոր քու փողն ու գանձը,
Դու սեցուցիր, անբաղդցուցիր իմ անձը»։
—Երթա՛նք մառան, խմենք անուշ գինիներ։—
Գինին ի՞նչ շահ, երբ սրտիս մէջ չի կայ սէր,
Քանց քու գինին անուշահամ, պատուական,
Սիրում էի մեր տան ջուրը սոսկական»։
Երթա՛նք շուկայ, առնունք ակեր թանգագին։—
«Ակը ի՞նչ շահ, երբ արցունք է իմ աչքին,
Անգութ հօրս դու փող տուիր ինձ առիր,
Ո՛չ ամուսին, այլ դու գերի ինձ արիր։

Երկնի՛ց թռչունք՝ դադարեցէք երգելից,
Եղէ՛ք սրտիս ցաւերուն դուք կարեկից.
Ես էլ էի ձեզ պէս մի օր խնդագին,
Գընաց կորաւ ազատ կեանքը իմ անգին.
Թըռէ՛ք, տարէ՛ք վերջին խօսքս իմ ծնողաց,
Թէ Նազլուի վիճակն է այժմ սուգ ու լաց.
Ասէ՛ք մօրս, որ տուաւ ինձ կեանք արև,
Թէ խեղճ Նազլուն ուղարկում է քեզ բարև.
Մերտունը, ուր անցաւ կեանքըս մանկութեան,
Էլ Նազլուին տեսնելու չէ՛ յաւիտեան։

Հօրը ասէք, քու խնդճ, թըշուառ աղջիկը
Բոլոր սրտից ներում է քու շար գործը։

Երեկոյեան պահուն, Աստիս ամիսին,
Ծընողք նըստած ծառի տակը միասին.
Անմեղ թռչնոց լըսում էին երգերը,
Մին էլ յանկարծ թօթափեցան ճիւղերը.
Բուէճն նըստաւ ծառի վըրայ ու գոռաց,
Հօրը մօրը պատճառելով սուգ ու լաց.
«Ձեր աղջիկը, անբաղդ Նազլուն չէ՛ կենդան,
Էլ գուք նորան տեսնելու չէք յաւիտեան.
«Թըռաւ կորաւ արև խըզճուկ որբուկին,
Երկնից Տիրոջ աւանդեց նա իր հոգին»։

ԵՐԿՈՒ ՔՈՑՐ։

Ունէին շատ առաջ կար մի թագաւոր,
Հոգւով գեղ արի, գլխով ալեւոր.
Մեծ ծով էր պատել նորա աշխարհը,
Ոսկի ասացին գիտունք այն դարը։
Ունէր նա երկու մատաղհաս աղջիկ,
Մինը խիստ տըգեղ, միւսը գեղեցիկ.

Մի օր տըգեղը ասաց միուսին.
«Երթա՛նք ծովի ափ, քուրիկ միասին»։
Սիրունը գընաց առաջից տրտում,
Տըգեղը նոնից ոխ պահած սրտում։
Հաղիւ թէ ծովի ափին էր հասած,
Իր սիրուն քըրոջ գըլուխց նա ցած։
Կանչեց կիսամեռ սիրունը ջըրից.
«Քուրիկ իմ, քորիկ փրկէ՛ ինձ մահից.
Ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ,
Ա՛ռ, էն քե՛զ լինի, պարգևէ՛ ինձ կեանք»...
—Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ։—
«Քուրի՛կ, թէ այդ էլ քեզ չէ՛ բաւական
Կուտամ քեզ ոսկի պըսակ պատուական»։
—Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ։—
«Քուրի՛կ, մի թողնիլ դու ինձ անտէրունչ,
Քեզ սիրուն փնասս կուտամ անտրտունջ»։
Տըգեղի սիրտը դարձել էր ժէռ քար,
Քըրոջ խնդիրքը թողեց անկատար։
Զկնորսը ծովը ձըգեց մեծ ուռկան,
Բըռնեց մարմինը սիրուն աղջկան.
Ջըրիցը հանեց, գըրեց ափի մօտ,
Շատ ծաղիկ ցանեց վըրան ու շատ խոտ։

Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջիկն,
Լացեց ու առաւ, դրրեց ուսի վրան.
Տարաւ իրա տուն այդ անգին գիւտը,
Զորացուց նորա մարմնու դիւի հիւթը։
Գեղեցիկ տաւիղ շինեց ոսկերից,
Քաղցրաձայն լարեր հիւսեց մազերից.
Երբ որ ամեն բան պատրաստեց կարգին,
Գրնաց արքունիք տաւիղը ձեռքին.
Երբ մրտաւ դահլիճ շքեղ զարդարած,
Տեսաւ տրգեղին փեսի մոտ կայնած.
Բացեց բերանը, լարերին խրփեց,
Հիւրերի առջև քաղցրաձայն երգեց.
«Հընչէ իմ տաւիղ, հնչէ համարձակ,
«Հարազատ քոյրս խրլեց իմ պրսակ.
«Լրսէ՛ իմ ծընող, լրսէ՛ սիրական,
«Հարազատ քոյրս խրլեց իմ փեսան.
«Լրսէ՛ ժողովուրդ, լրսէ՛ անխրատ,
«Հարազատ քոյրս գլորեց ինձ ծոմ»։
Միւս օր դահլիճք խարշկ շինեցին,
Մահապարտ քրրոջ մէջը գլորեցին։
Հուրը պրպրաց, աղջիկը կանչեց.
«Իմ մեղաց համար Աստուած ինձ պատժեց»։

ՎԵՐՋԻՆ ԳԱՐՈՒՆ։

Գարունն է եկել նախշուն թևերով,
Նախշուն թևերը պէսպէս ձևերով,
Գոյն գոյն ծաղիկներ՝ կարմիր ու սպիտակ,
Վարդ, մեխակ, շուշան անուշ հոտերով։

Երկինք ու երկիր քեզ տօնեն, գարուն,
Չի ես քան զամեն եղանակ սիրուն.
Նա անձրև ցօղէ առատ ի վերէն,
Դա օրհնել տայ քեզ եկուոր հաւերուն։

Ոսկի արևը փայլէ քեզ վերէն,
Կենսաբեր հովը փչէ ի լերէն.
Ա՜խ, աղնիւ գարուն, եղանակ սիրուն,
Արդեօք դու ինչ բաղդ բերիր ինձ Տէրէն։

Գվխաքարշ երթամ ի պարտէզ այգուն,
Ախ ու վախ քաշեմ ես անդ օրն ի բուն.
Զիկայ ինձ հանգիստ, ցնծութիւն սրտիս,
Ես վազեմ մոռցել զի՞նչ անդորր է քուն։

Ի՞նչ ասած պատանքած գետնին կեանք տուար,
Տերևթափ ծառին ստուերախիտ արար,

Քեզ թռչնոց երամ՝ հանդէս կանչեցիր,
Ի՞նձ մենակ խղճիս էապէս մոռացար։

Ուռաջ գնա, զարուն, դէպ ի հիւսիսն ի խոր,
Գնա, կանանչցո՛ւր զու անդ սար ու ձոր.
Որոց անհամբեր քեզ կան՝ տո՛ւր բարև.
Ք՝ ուրախ գաստեամբ նոցա զուարճացո՛ւր։

Կուգաս գալ տարի, զու ինձ կրգտնիս
Ո՛չ ի մեր այգին և ո՛չ ի պարտէզ,
Ամլ անզարթ քրնով հողի տակ պառկած,
Գերեզմանաքար մի վրաս կը տեսնիս։

—:—

* * *

Սիրելիք, օգնութիւն հասէ՛ք,
Դաչար գլխիս ճար տեսէ՛ք,
Սրտումն է սիրոյ բոցը,
Շատ խոր է նորա խոցը,
Հանգցնելու հնար չի կայ,
Լաւցնելու ճար չի կայ։
Բաղչից վարդ քաղել ուզեցի,
Փշով ձեռքս ծակեցի,

Անցյալ սիրով վառուած եմ,
Բռնաւորից դաղուած եմ.
Աշխարհ աչքիս սևցել է,
Հոգիս մէջը դևցել է.
Ժամ, պատարագ, սրբութիւն
Ինձի էլ չեն փրկութիւն.
Աշխարքումս մի կին էլ
Եարիս թագը չի ծրնել.
Ո՛չ Սարրա, ո՛չ Շամիրամ
Իլել են Զանանիս նրման.
Երկնեն բոյը չինարի,
Ինքը տատանվեց տարի,
Դախշուն աչքը ջկրանի,
Քեզ պաշտելն երանի.
Ո՛չ Ցուդիթ և ո՛չ Եսթեր
Ունեցել են քու թուխ ունքեր.
Սիրուն, նազելի Զանան,
Աշխարքումս անները ման.
Ո՞ր թագաւոր քու սէրն
Վէր չի գալ իւր աթոռն,
Ծնկո

Զեմ ուզում ես զանձ ու թագ,
Տուէք անձկալուցս մենակ,
Ոտնախոզիդ ես զուռբան,
Ընդին գոհար իմ Զանան։

ՀԱՑՈՑ ԱՂՋԻԿ։

Դու տեսնչ ես երկնքումը
Պայծառ լուսին ծագելիս,
Կամթէ՝ կանանչ տերևի մէջ
Կարմիր ծիրան փայլելիս։

Դու տեսնչ ես ծաղկոցումը
Կարմիր վարդը փրթրթած,
Շուշան մեխակ ու նունուֆար
Զորս բոլորքը պար բռնած։

Բայց լուսինը խիստ խաւար է
Հայ աղջկայ առաջին,
Ծիրան, մեխակ ու նունուֆար
Զարժեն նորա մէկ պաչին։

Երկու թըշին վարդ են նատել,
Ճերմակ ճակտին մէկ շուշան.

Ժպիտը բերնից ցած չի գալիս, —
Ընմեղութեան է նշան։

Տե՛ս, նա առաւ կարմրելով
Իր ընկերից դահիրան,
Դրմդրմելցուց փափուկ մատով
Ու ըսկսեց լեզգինկան։

Լաղուք մէջքը ծռի նման
Տատանում է գեղեցիկ,
Մէկ թռչում է նա անդուման,
Մէկ գընում է խիստ հեզիկ։

Հալվում է խեղճ կորիճների
Սիրտը՝ նորան տեսնելով,
Ծերը իրան անիծում է,
Որ ծերացաւ խիստ շուտով։

ԷԳՈՒՑ։

Ինձ մի՛ տանջիլ, մի՛ չարչարիլ, սիրական,
Լոկ խոստմունքդդ իմ սրտին չեն բաւական.

Բոց աչքերդ ու շուրթերդ վարդանման
Երջանկութիւն խոստանում են յաւիտեան։

Քնեզ տեսնելիս, ա՜խ, մոլորվում է միտքս,
Ուժգին ուժգին թափ է տալիս վառ սիրտս.
Մէկ ջերմաջերմ, մէկ սառ վազում է քիրտս.
Զօրութիւնքս հատաւ ինձնից, սիրական։

«Ոչ գուց, էգուց լքսում եմ քու բերանից,
Ցոյսս հատաւ, հատաւ էսքան խաբուելից,
Քունքս փախաւ, փախաւ խապառ ինձանից.
Դո՞ւ ես դու շար, թէ՞ հրեշտակ ես աննման։

Ոչ մի՛ խարիլ ու մի՛ խաբուիլ, անձկալիս,
Էգուցները միշտ ներման չեն յետ գալիս.
Վա՜յ թէ էգուց աղի արցունք թափելիս
Դու ինձ ճանփես դէպի մրթին գերեզման։

* * *

Ավարդը բացուել ա ծաղկոցին,
Ամպի ցողը շողաց ծոցին,
Ա՜յ իմ վարդին, կարմիր վարդին,
Դաստա Դրախտին։

Թերթիկները դուզ փռելա,
Նազուք գլուխը ծռելա.
Ա՜յ իմ վարդին, կարմիր վարդին,
Դաստա Դրախտին։

Ձեռ համբերել, վարդ մայիսին,
Դուրս ես եկել մարտի ամսին.
Ա՜յ իմ վարդին, կարմիր վարդին,
Դաստա Դրախտին։

Արև թառամիս, կը չորանաս,
Մինչ մայիս թե չի դիմանաս.
Ա՜յ իմ վարդին, կարմիր վարդին,
Դաստա Դրախտին։

Ցաժան քամուն չես համբերի,
Զազիր ճրճուին կ'ըլես գերի.
Ա՜յ իմ վարդին, կարմիր վարդին,
Դաստա Դրախտին։

Ձեռ տեսնելու թիթեռնակին,
Ոչ աւետման ծիծեռնակին.
Ա՜յ իմ վարդին, կարմիր վարդին,
Դաստա Դրախտին։

Կուգայ բը լբուլը թեմանէն,
Քեզ կուկանչէ գերեզմանէն,
Աշ իմ վարդին, կարմիր վարդին,
Դաստա Դրախտին։

Կու գանգատէ իր սև բաղդէն,
Թէ որ մընաց կարմիր վարդէն.
Աշ իմ վարդին, որբուկ վարդին,
Դաստա Դրախտին։

ՈՍՏԻԿ։

Ո՞ւր ես առաջ գընում, խեղճ ոստիկ ծառին,
Տե՛ս, չի ձրգեն քեզ ալիք յանգունդը ծովին։

Ինչպէս անտէր որբիկ թշուառ, անպաշտպան,
Որ ընկել է ձեռքը չարանենգ մարդկան։

Չե՛ս ունենալ, ոստիկ, ազատութեան հնար.
Զոհ կը լինիս, խեղճիկ, ալեաց չարաչար։

«Չե՛մ զարհուրում ծովից, ոստիկը ասաց.
«Կեանքըս արդէն կորել է, վաղուց եմ ցամաքած։

«Հարաղատ այն ծառէն ինձ պուկեց հոմը,
«Հիմի ի՞նչ, թող տանէ ուր ուզէ ծոմը։

«Հիմկուց դէնը ի՞նչ է էլ ինձ մըխիթար,
«Դալար ծառին կըպչելու էլ չունիմ հընար»։

ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ։

Քո՛ւն էղիր, պալաս, աչքըդ խուփ արա՛,
Նաշխուն աչքերուդ քուն թող գայ վըրայ։
Օր օր օր պալաս, օր օր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կըտանի։

Օսկի խաչ վիզիդ՝ քեզի պահապան,
Նարօտ կապիլ է ծարէն տէրպապան.
Օր օր օր, պալաս, օր օր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կը տանի։

Ամի՛ հիլուններ կախել եմ ես ալ,
Նազար չես առնուլ, քո՛ւն էղիր, մի՛ լալ.
Օր օր օր, պալաս, օր օր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կը տանի։

Այս քանի՞ մօրըդ անքուն աչքովը
Անցել է օրեր օրոցքիդ քովը.
Օր օր օր, պալաս, օր օր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կը տանի։

Օրոցքըդ օրրիմ, օրով բոյ քաշիս,
Մըղկոան ծանով սիրտըս չի մաշիս.
Օր օր օր, պալաս, օր օր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կը տանի։

Դուն ալ քո՛ւն եղիր, ինծի ալ քուն տուր,
Սուրբ Աստուածամայր (այս անունին) քուն տուր։
Օր օր օր, պալաս, օր օր ու նանի.
Իմ (այս անունին) քունը կը տանի։

ՀԱՑՈՑ ԳԻՆԻ։

Բաժակներ առնունք, եղբա՛ր բ,
Լիք լիք բաժակներ գինով,
Կարմիր ու ճերմակ գինին
Մեզ լինի անուշ համով։

Ներեցեք տանենք անվախ,
Չէ՞ դա խառնած կամ խարդախ,

Նեկտար է և ոչ գինի,
Խրմե՛նք, մեզ անուշ լինի։

Բարեքսայ ջրերով ցողած,
Հայոց արևով հասած,
Հայոց աղջիկ է քաղել
Քրնքոյշ ձեռներով քամել։

Այս բերքն է Հայոց երկրին,
Հայաստան տրնկած նոյէն,
Անմահ երկնային գինին
Նա խմեց, երբ իջաւ Սարէն։

Այս անոյշ գինին խմողը,
Արտէն թո՛ղ հանէ ոխը.
Ամենքս էլ ասենք ամէն,
Որ շատ տայ մեզի ամէն։

ՈՒՍԱՆՈՂ։

Երբ որ հողից մարդ դարձայ,
Երբ Աստուածանից հարցայ,
Թէ՝ ի՞նչ վիճակ ես ուզում։
Ասի՝ ուսանողութիւն։

Աստուած ուզեց զարդարել,
Ինձ դիպայ շորեր կարել.
Ասի՝ էն դու կանանց տուր,
Ինձ մի ներշանագգեստ տուր։

Կապտածրդի գլուսակ տուր,
Մէջքէս կապէ հատու սուր.
Առանուրբս լաւ գինին,
Թող միշտ անպակաս լինի։

Իմ սիրելի նազելին
Մնայ ինձ միշտ հաւատարիմ.
Փրղշտացի ախոյեան
Տէս իմ սուրն է իմ պաշտպան։

Ո՛վ չի իլել ուստանող,
Լաւ է, որ միշտ մընար հող,
Քանց Աստուծոյ լոյս արևն
Անատնոց պէս վայելէր։

Ո՛վ չի կոնծել երգելով,
Ընկերաց հետ պարելով,
Նա չըգիտէ ցնծութիւն.
Եղուկ սրտին, վայ հոգուն։

Ո՛վ չի երդուել ընկերաց,
Պաշտպան լինել Հայրենեաց,
Վերջին արիւնը թափել,
Հայրենիքը ազատել։

Ինչպէս էնպէսն հեռանայ,
Լոյս աշխարհից վերանայ.
Թող անասնոց կարգն ընկնի,
Թող մեր մէջ նա չի մընի։

ՈՒՍԱՆՈՂԻ ԿԵԱՆՔԸ։

Ուսանող ասածը մի երջանիկ մարդ է,
Չի նա միայն լաւ ապրել գիտէ.
Շիշը գինով առատ,
Քսակը փողից փարատ,
Այսպէս ապրել մի՞թէ լաւ բան չէ.
Փողից դարտակ ինքը, պարտքը մինչև շլինքը,
Այս է գոված ու աշնիւ կեանքը։

Ուսանողն սիրտը սիրոյ էլ է տուած,
Ինչպէս հրամայել է մեզ Աստուած.

Միրուն աղջիկ տեսնել
Ու քամակից չընկնել,
Այս օրէնքով խիստ է արգելած.
Գլուխ կարդալումը ոմ է մեզնից առաջ,
Գ՛այ, մի կանգնի՛ մեր առաջ։

Մի քանիսն են ասում «Դու խաղումն ու քէֆում,
Ի՞նչ շահաւէտ բաներ ես տեսնում».
Այսպէս ասողները
Են լոկ տխմարները,
Որք փողին են Աստծոյ տեղ պաշտում.
Օր մի քէֆիսլացած, օր մի խմաստասէր—
Այս Մոսլէան էլ ընաւ արգելած չէր.

Հօրըս խիստ նամակը ինձ միշտ տխրացնում է,
«Ինչնի՞ սովորել ես» հարցնում է.
Նաև՝ ուրիշ սրանից,
Իսկոյն յիսա Մեծ-Պասից
Մեզ դատաստան ահեղ սպասում է.
Բայց մի վախիք, եղբարք, Աստուած մեզ օգնական,
Ամենքս էլ կ՛իլենք բաւական։

ՈՒՆԱՑՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ։

Ի՞նչ ես ջարդում անձրդ, էյ մարդ, ցաւերով,
Գլխիդ բարդում գանձրդ անթիւ նաւերով.
Արի՛, աղբէր, իմ խրբատին դու մի՛ա դիր,
Հոգս ու ջաղէդ ա՛ռ քեզանից ու յի՛ա դիր։

Ներկ ու թեթեւ դու էս աշխարհ էկել ես,
Բեռան տակը մէջքդ ինչո՞ւ թեքել ես,
Թանգ արծաթի խաթրին դու քեզ գերել ես,
Գեղին ոսկու սիրուն հոգւով մեռել ես։

Դիպպայ շորեր, անգին քարեր, գանձ ու գահ
Ե՞րբ ես տեսել, որ մարդուս անեն անմահ.
Նահախ պրտրում ես արծաթի մաղանը,
Որ աժան է օխտը կաղ քու քաթանը։

Լսօր, էգուց քեզ կուգրկէ պատանքը
Ու չի փրկիլ մահից ոսկին, ո՛չ հանքը։

ԲԱԺԱԿ ՓՐԿՈՒԹԵԱՆ։

Ը.հա՛ մթնեց արևմուտքը Հրեաստանի աշխարհին,
Պայծառ օրը տեղի տուեց երեկոյեան խաւարին,
Արեգական վերջին լուսով դեռ կը փայլէր վառ ի վառ
Գրկած պատած այգիներով Ելէօնին սուրբ կատար։

Յերուսաղէմ—փառք հրնութեան՝ լերանց վերայ հանգ-
չում էր,
Կարկաչելով Յորդանանը ափերի մէջ թաքչում էր,
Մեռեալ-ծովը քրնաթաթախ աչերն ի վեր ամբարձած,
Համարում էր անթիւ աստղեր՝ երկնից տեսքին զրմայլած,

Ո՞ւթը ինչպա... տարածեցաւ գերեզմանի լռութիւն,
Ծագեց լուսինն ու լոյս տուեց Գեթսեմանի այգիուն,
Զիթենիի ծառերու տակ, հողի վրայ տարածած,
Երեք հոգի խոր քրնելեն՝ դարդն ու հոգսը մոռացած.

Ոայց ուրիշ քուն կաշկանդել էր համայն ազգին մարդ
կութեան,
Խրուած թաղուած մինչի կոկորդ ճահիճի մէջ մոլութեան.
Միայն Մինի սուրբ աչերից քունը հեռի էր փախչում,
Ո՛չ խայթ խրդճի, ո՛չ աշխարանք նորա հոգին էր տան-
ջում։

Ալա անմեղ էր. մոլութենին նա միշտ մինաց անհաղորդ,
Լոկ մարդկութեան համար թափեց այսօր արցունք աչքից ցորդ.
Մահագուշակ սարսուռ ընկաւ նորա տրկար մարմնին,
Երբ փրկութեան մարդկան ազգի բաժակ տեսաւ առաջին.

«Հայր, կոչեց նա, վիշտը հոգին իմ ճրին շուտ է շարաչար,
Քանի որ կամ՝ պրսակ ու փուշ աչքիս անցնում են շար շար.
Կու գայ ժամը (Ես այդ գիտեմ) գառը կ'լինի ողջակէզ,
Չի տրտնջալ իւր վիճակէն, կը խոնարհէ գլուխը հեզ։

«Միակ որդիդ պիտի մեռնի, որ ազգ մարդկան ազատէ,
Անգոհ մարդը նորա գլխուն հայհոյանքներ կը թափէ.
Հայր, Հայր, ինձնից թող հեռանայ այս բաժակը դառնութեան,
Որոնց համար ես պիտ՝ մեռնիմ՝ բընաւ չաժեն փրկութեան.
Բայց թէ Որդուդ դառն մահը ազգիդ կուտայ նոր մի կեանք,
Նոցա անթիւ մեղաց համար լիցի արիւնն իմ փրկանք»։

ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՊԱՏԿԵՐԸ։

Ինչո՞ւ լալագին աչքով նը խշած է
Տիրամօր պատկերը ժամուն մը կախած.
Ինչո՞ւ ձեռները խաչ կապած է,
Աչքերը դէպի երկինք ամբարձած։

Ինչի՞ է կարօտ, ի՞նչ է աղօթում։
Անարատ, անմեղ, սուրբ Աստուածածին,
Ասես՝ խօսքերը ջերմեռանդ սրտէն
Գրնում են երկինք դէպ՝ առ սուրբ Որդին։

Դահակ չի իջնում երկնառաք ցօղը
Ցամաքած, կոշտացած մեր երկրի վրայ.
Դահակ չի ծաղկում սևացած հողը,—
Այս են պաղատում աչքերը նորա։

Իմէ որ անմեղը չաղօթէր իսկի
Իրա մեղաւոր ազգօրը խաթրին,
Երկիր կու ճաքուէր ահեղ ձէներով,
Երկին կուխառուէր վերից մեր գլխին։

Իմէ որ արդարը չիներէր իրա
Զարշարող, տանջող, զալում դուշմանին,

Էլ ո՞վ էր մեզի փրկում ազատում,
Խոպան կիլէին գժոխքի որդին։

Ապա՝ լաց իլեր, ծանր ա՞ խ քաշէ,
Որոց Աէր, այրեաց մրխիթարութիւն.
Թո՛ղ քու արտասունքն վազին ջրի պէս,
Թաք որ ցամաքի երկրէս շարութիւն։

ՔԱՀԱՆԱՅ։

Այն ո՞վ է կանգնած ամբիոնի վրայ,
Դողդոջուն ձեռքերն երկինք ամբարձած,
Գրքաւոր աչերն լի արտասունքով,
Բազմութեան ուշկը դէպի նա դարձած.
Որին ամենը հոյլ են անուանում,
Ծանօթ, անծանօթ՝ հաւասար յարգում,
Որի լոկ խօսքը օրէնք է նոցա,
Արտի գաղտնիքը նորան են յայտնում։

Քահանայ է նա, քաւող մեղքերու,
Միջնորդ Աստուծոյ մարդկան ազգի հետ,
Հովիւ է անխոնջ Քրիստոսի հօտին,
Երկնաձիր գանձին նա է արքուն դէտ։

Երբ մենք թաթախուած Ադամայ մեղօք
Եկանք այս աշխարհ լըցեալ ցաւերով.
Ո՞վ սրբեց մաքրեց մեր հին մեղքերը,
Ո՞վ մեզ ազատեց իւր սուրբ խօսքերով.
Կամ՝ երբ ժանտախտած, ընկած մահճումը՝
Պրտատանք, անչքոյս մահ էինք խնդրում,
Պանդխտի նըման ամենից թողած՝
Ո՞վ մեզ առաջին հասաւ օգնութիւն.
Կամ՝ երբ մոլորուած գառների նըման
Կոյր վազում էինք դէպի խորխորատ՝
Ո՞վ արդեօք այն օր փրկեց մեզ մահից,
Դիւական գրբէն հանեց անարատ.
Կամ՝ երբ մեզսալիր աչքերըս բընաւ
Չենք համարձակում երկինք ամբառնալ՝
Որի՞ն կանչում ենք միջնորդ հաշտութեան,
Ումո՞վ յոյս ունինք թողութիւն ստանալ.
Եւ կամ՝ ըզբաղած ունայն գործերով,
Մոռցել են Աստուած, կրօն, սուրբ հաւատ,
Ո՞վ է մեր տեղը մեր մեղաց համար
Արտասունք թափում աչքէն յորդառատ.

Քահանան է այն և միշտ քահանան,
Մեր միջնորդ, հոգեւ քաջ և աղօթիչ,
Որոց հայր, եղբայր աղքատ մուրացկին,
Արտասուաց սրբող, յանցանաց քաւիչ.

Ո՛վ պատուենք, եղբա՛ր, այդ սուրբ քահանան,
Սիրենք միշտ նորան մանկական սիրով,
Որ ամբողջ գիշեր իւր որդոց վերայ
Պատրաստ է հրսկել անքուն աչքերով։
Նա բոլոր կեանքը զոհեց մեզ համար,
Ազգեց փառք, պատիւ, զբօսանք աշխարհիս,
Քանց սուրբ քահանան էլ ո՞վ է կարող
Արդեօք մեզ համար լինել հայր բարի։

ՏԱՊԱՆԱԳԻՐ

Մ. Բ. ՄԱՆԿԱՆ.

Հազա՞ր երանի քեզ, մանուկ ամբիծ,
Որ շուտ հեռացար դու այս աշխարհից,
Ուր վաղուց ի վեր ունի բնակութիւն
Անմեղութեան հետ մոլի չարութիւն.
Բայց այն ո՞վ գիտէ՝ քեզ ինչ էր սպասում
Փըշոտ, տատասկոտ այս մեր աշխարհում։
Միթէ յաւիտեան պիտի մընայիր,
Հանգիստ գրկի մէջ քու մոր սիրալիր,
Կամ թէ՝ յաւիտեան քեզ պիտի ժըպտար,
Գարնան վարդի հետ այս օտար աշխարհ։

ԽՐԱՏ ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿԻՆ.

Դեռ չի գրրած՝ առաջ դու լա՛ւ միտք արա,
Ո՞վ է խեղճիդ գրրուածները առնողը.
Յետոյ՝ և այն մասին փոքր ինչ հո՛գս արա,
Որ քեզ սիրէ քու յարգելի կարդողը.

Դու այս երկու հանգամանքը լա՛ւ յիշէ,
Քու քանքարի վրրայ շատ յոյս մի՛ դրնիլ,
Եղի՛ր թէկուզ խորենացի, եղիշէ,—
Զրսերելով քեզ՝ գրքերրդ չեն գրնիլ.

Դրրիդ մէջը պարսաւանք մի՛ տալ Հային,
Հայը խրրատ (թէև) խելքք առում է.
Մի՛ ծիծաղիլ նորա տխմար գործերին,
Որ նա աւանդ հօրենական կարծում է.

Մի՛ դու Հային իր խոր քրնէն արթնացնիլ,
Բարոյական քունը նորա անուշ է.
Կամ՝ անցեալը նորա առջև մի՛ յիշիլ,—
Այդ անցեալը նորա աչքին սուր փուշ է.

Դոմէ նորա այն սրխրալի արարքը,
Որ խեղճ Հայը երազումն էլ չի արել,

Նորա ամոթ բնութիւնը ու բարքը,
(Սուտ պարծանքը Հայերի խելքն է տարել)։

Կրէ, թէկուզ լեզուս լինի սանսկրիտին,
Հայը շատ ուշք կարդացածին չի դրնում.
Նա լսում է մի քանիսի դատմունքին,
Թէ ի՞նչ կերպով պարոն Օհանն է դատում։

Օհաններն են Հայոց դատմանց փորձաքար,
Որոնց խօսքը ու վրճիռը անսիուսիոս
Միշտ մընում են նոցա համար դարէ դար.
Օհաններին քեզ սիրել տուր, խնդ գրող։

Ընդ երկնաձիր քու քանքարը ի՞նչ օգուտ,
Թէ խօսածդդ անապատի բարբառ է.
Հայի համար քու ասածը խիստ է մութ,
Նորա սիրտն էլ քու զգացմանցը սառ է։

Սուտ ըսփոփանք, թէ դու կ'ասես, որ մի օր,
Նա կըսթափի իր դարևոր խոր քընէն,
Թարմ զօրութիւն հոգու մէջէն ու կեանք նոր
Պիտի վազին երբէք նորա երակէն։

Ա՛յ դու, պոմէտ, ընկճուել ես, վրհատել,
Երկինք թողած՝ երկիրումն ես քարշ գալի,

Սիրել գիտես, գիտցիր դու ատել,
Ինչ որ հոգիդ վրկայում է ատելի։

Դու նրմանիր ազատասէր թռչնակին,
Որ երգում է անանձնասէր յոյսերով.
Ինչո՞ւ ձիրքը քու երկնային ու հոգին,
Զբաղացնում ես երկրի շնչին գործերով։

ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ ԿՐԹԱԾ ՀԱՅ ԱՂՋԻԿ։

Հ՞ուշան՝ շուտով դէմքդ ծածկէ, ձիւն դու՝ թուիր մրրոտած,
Ցե՛ս, սիզաձեւմ մաղ է գալիս Հայ աղջիկը մեր կրթած.
Վարդի գոյնը ужъ не въ модѣ: то-ли дѣло блѣдный ликъ!
Այստեղումը блѣдный են դիմի՝ համ աղջկունք, համ կնանիք.
Ի՞նչ է գաղտնին блѣдный-ութեան — այդ յայտնի չէ՛ ոչ ոքին,
Միայն կ'ասեն, որ շատուց է կաւիճն ունի բարձր գին։

Ողաւօտ է. մեր աղջիկը հայլեկից չի հեռանում,
Նորա ծընողք այնօր ճաշի гвардеецъ են սպասում.
Гвардеецъ է, լա՛ւ միտք արէք, Հայ չէ, անշնորհ ու տգէտ,
Гвардеецъ է՝ փայլուն շորով, ուսին գրրած эполетъ.
Տուն կրմտնի, գլուխ կրտայ այնպէս սիրուն, շնորհաշուք,
Որ մեր կրթած Հայ աղջկայ սիրտը կ'անէ тукъ-тукъ-тукъ!
Ինտուր համար նա հայլեկից օրն 'ի լուն չի պուկ գալի,
Гвардеецъին դուր չի գալը խիստ է նորան ըզգալի։
Ո՞չ լոկ գէմքով պիտի դուր գայ, այլև անուշ խօսքերով,
Ի՞նչպէս, ի՞նչկերպ, դուք կը հարցնէք, այդ էլ շըգիտէ ոչով։

Բարձի տակը պահած ունի նա George sandի romanը,
Գ-իշերները մօրից թաքուն կարդում է մինչ շորս ժամը։
Ընհատական այդ աղբիւրից նա քամում է անդադար
Սիրոյ զգացմունք, սիրոյ խօսքեր—կանանց սրտին մրխիթար։

Նա գրտաւ իր идеалъը, այսօր ճաշին կրտեսնէ
Նա իւր անտես սիրահարին, ում որ սիրտը տուել է։

Հայո՛ց աղջիկ, Հայո՛ց աղջիկ՝ գնա՛ առաջ, մի վախիլ,
Бѣдный գէմքըդ, շինծու խօսքըդ ովի՞ն ասես չեն խաբիլ։

Гвардеецъին դուր չես գալի, —ի՞նչ ափսոսանք, ի՞նչ վրնաս,
քեզ սիրահար гусаръ, уланъ, артилеристъ կ'ունենաս։

Դու փոքր փորձէ նորից դուր գալ, անոյշ ժպտա՛ ու խօսէ,
Քրսան մէկըդ արդէն մօտ է, տե՛ս, առաջիդ մեծ փոս է։
Բայց մի թողնիլ դու Georg sandeին, идеалъիդ մ'ուրանալ։
Թէ ոչ ջահիլ, գոնէ ծերուկ կ'առնու քեզ Դուս генералъ.
Բայց զգուշացիր դու Հայերից, գին չեն դնիլ, չեն սիրիլ
Քեզ, ինչպէս դու ցանկանում ես. դու քեզ Հային մի մատնիլ։
Փորձ փորձեցիր ու դուր չեկար ոչ уланъին, гусаръին,
Քրսանհինգըդ մտանում է. Հա՛յ աղջիկ՝ վա՜յ քու հալին։
Հայո՛ց աղջիկ, Հայո՛ց աղջիկ, գնա՛ առաջ, մի վախիլ,
Бѣдный դէմքըդ, սիրուն խօսքըդ ովին ասես չեն խաբիլ։
Տարիներըդ ակօս ձըգից քու շնորհալի երեսին, —
Վրնաս չի կայ, —подругներըդ զորա Համար ճար ունին
Երբ որ տանն ես՝ մի Հրամայիլ տղոց քեզի մտանալ,
Դուրս գընալիս лицеիդ ձըգէ դու կրկնաձալ Հաստ вуаль,
Հարցնողներից ուշի ուշով ծածկէ տարիդ ծրնընդեան,
Ու ամենին Հաւատացո՛ւր, որ տասնութ ես տարեկան։

ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ ԿՐԹԱԾ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ։

Տեղը եկաւ՝ Հայ է նա, տեղը եկաւ՝ պլաղգի,
Իրաք ո՛չ այդ և ո՛չ այն է, պլ ծընունդ մի նոր ազգի.
Հագնըվում է նա միշտ en grand, մեն է գալիս à la chique
Ճաշ է ուտում, ո՞ր էք կարծում, chez Dussot կամ Dominique.
Կարդում է նա Morning, Debats, ոչ Բազմավէպ, ah! fi, donc!
Ֆրանսերէն էլ կոտրատում, Հայերէն է movais ton.
Զարթում է նա ուղիղ մէկին, անկողնի մէջ թէյ խըմում,
Նախաճաշիկն է երեքին, Գաղղիացի պանդոկում.
Վեցին քառորդ ճաշի ժամ է չընաշխարհիկ մեր Հային,
Ո՛չ թէ ստիպուած է այդ անել, այլ որ վըրան շատ խօսին։
Ուշի ուշով հետևում է Պետերբուրգի լուրերուն,
Դերձիկից էլ ճիշտ տեղեակ է новомодный շորերուն,
Թէև զուրկ է մուզիկայից, բայց опера սիրում է,
Бозіоի անուշ ձէնից նորա խելքը գընում է.
Պինդ խօսում է, ինչ որ կանխաւ feuilletonումն է կարդել,
Խօսքով աշխարհ կործանում է մեր պարոնը անարգել.

Նէպիր, Դունդաս ու այլ անձինք են նիւթ նորա զբրոյցին,
Պախարակում է Hugoին ու սիրում է Դիկէնսին։
Նա սիրում է, նա ատում է ո՛չ սեպհական իր խելքով,
Նա խրմում է, նա ուտում է ո՛չ իր բերնի ճաշակով։
Նորա խելքը feuilletonն է, прейсъ-курантն է ճաշակը,
Ու Գիտութեանց ճեմարանը է որ ասես պանդոկը։
Քանի տարի քաշէ գալիս Պետերբուրգում այս կերպով,
Ու յետ դառնում իր Հայրենիք, դատարկ խելքով ու ջիբով.
Այնուհետև պահանջմունքը նորա մեծ են անհեթեթ,
Միայն ինքն է խելօք, գիտուն, իսկ այլք կոպիտ ու տգէտ.
Այդ ի՞նչ զարմանք, որ յիմարը ուզէ պատիւ իր անձին,
Նա՛ յիմար է, որ անարժան տայ պատիւը յիմարին.
Բընութենէն խելագուրկին Պետերբուրգը խելք չի տալ,
Մեծ յունար չէ՞ փողոցներում աննըպատակ միշտ ման գալ։

ԱՆՎՆԱՍ ՄԱՐԴ։

Հետևելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կեանքումս մարդու ձևաս չի արի.
Արժանացայ մեծ մեծ պատուոյ ու փառաց,
Որ միմիայն նպատակն էր իմ կենաց.

Տունքս առաստ ազգի ազգի ուտեստով,
Սնդուկներքս լի թանգագին ըզգեստով
Ծառաներքս մունջ, միշտ հրլու հրամանիս,
Անպակաս էր ոսկի, արծաթ գրպանիս։

Բայց ո՞վ տեսաւ երկրիս վրայ անիուշ վարդ,
Այպէս յաւէրժ փառքով լըցեալ չի կայ մարդ,
Այո՛, հասան ինձ էլ օրեր դառնագին,
Բայց 'ի զուր, զի յանցաւոր չէր իմ հոգին.
Ես մընացի Տիրոջ կամքին հընազանդ,
Աղօթելով տիւ և գիշեր ջերմեռանդ.
Հետևելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կեանքումքս մարդու վընաս չի արի։

Մի օր ծառաս կոտրեց իմ մեծ հայելին,
Որ կ'աժեներ քիչ քիչ հազար ֆեօրին.
Ես չասացի նորան խօսքեր անվայել,
Այլ ստիպեցի վեց ամ ձրրի ծառայել.
Այս դիպուածը նորան խրրատ կըլինէր,
Թէ որ մինչև եօթներորդը նա ապրէր.
Հետևելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կեանքումքս մարդու վընաս չի արի։

Մի օր եկաւ իմ մօտ մի խեղճ պատանի,
Խնդրեց, որ ես դընեմ նորան մի բանի,

Խիստ շատ սիրեր էր թշուառի խնդրածը,
Բայց էն տարի շատ թանգագին էր հացը.
Զընդունեցի. նա էլ գընաց ջուրն ընկաւ.
Ափսո՞ս տղայ, որ նա էդպէս շուտ մեռաւ.
Հետևելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կեանքումս մարդու վընաս չի արի։

Մի օր տեսայ մի ալևոր մուրացկան,
Որ վեց տարի առաջ այգումն էր վարձկան.
Խոշբէշ արի հետը, սիրով խօսեցի,
Արանից սակայ՝ վո՞նց է քէֆերդ, հարցուցի.
Բայց նա յանկարծ ինձանից խնդրեց մէկ մանէթ,
Ես զարմացայ սաստիկ ու շուտ դարձայ յետ.
Հետևելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կեանքումս մարդու վնաս չի արի։

Մի օր որդիս իրա կամքով, անհրաման.
Սընդուկիցըս հանեց հինգ թէ վեց թուման,
Ես իմացայ. վերայ հասայ բռնեցի,
Ձեռքը կապած դատաւորին մատնեցի.
Շատ չի անցաւ, վախից խեղճը թոյն կերաւ
Ահա՛, էսպէս միակ յոյսը իմ կորաւ.
Հետևելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կեանքումս մարդու վընաս չի արի։

Իմ Շուշանի սիրտը կըպաւ Օհանին.
Էդ Օհանի ծընողք շունքի խեղճ էին,
Ես Շուշանիս տուի հարուստ քոռ Գ.օգուն,
Որ համրանքով չգիտէր չափը իր ոսկուն.
Բայց քամբաղդ էր ծընած օրից խեղճ Շուշան,
Վեց ամիսից մընաւ թաց .սառ գերեզման.
Հետևելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կեանքումըս մարդու ֆնաս չի արի։

ԱՂԷՆ ՏԱ՞ՆՆ Է։

Ո՞ արմանք բան է, հէնց գիտենաս,
Աղէք տանը չին ներստում.
Իսկի չելաւ վուր մի գրտնիմ
Աղալօին իր տընում։

Ա՛ի արմընա, պարուն Սարգիս,
Էս աշխարքի ադամին,
Իշխանք, գանա, դու խաբար չի՞ս,
Վուր քասիրին կու ատին։

Ա՛ռ օրինակ, թէ մեծավուր,
Ապալեոնիրը ուսին,

Գայ գրբան մօտ, Հարցնէ աղին,
«Տա՞նն է». — տանն է, կոսին։

Ելբա էդնից մի փէշաքար,
Էլի էն նաքրին Հարցնէ.
«Տա՞նն է աղէն». կընծին տալով
Խեղճին իսկոյն դուս կանէ։

Լէռ աղի մօտ լաւ շուրերով
Կուգաս՝ տանը կու գրէնիս.
Վայ թէ շուխէդ Հընացած է,
Լաւն էն է, տուն չի մրտնիս։

Լէռ սալօպով աղջիկ պարոն
Կու գայ՝ թող ներս Հրամայէ,
Թէ դաթիպով պատաւ Զալօն
Հարցնէ կոսին տանը չէ։

Լէռ վուր ձեռիդ քիսա բրռնած,
Պարոնին փուղ բերիլ իս,
Փառք ու պատուով ներս մրտնում՝ իս,
Գլխի վրայ տիղ ունիս։

Լէռ դուքանդար իս, Հիսարով
Փուղի էդնից իս էկի,

«Տաճնավ աղէն». կոսին—հալա
Ժամիցը տուն չի էկի։—

Լաս է հիմիկուայ ադաթը—
Կ'ուզիս ջիգրից տրուաքի՛,
Թէ քասիր իս, ջուրը ընկի՛,
Թէ խօջա իս՝ տո՛ւն մրտի։

ԹԻՖԼԻԶԻ ՓԷՖ։

Թէ սիրում իս թամաշա,
Պրտիս տեսնի քաղքումը,
Ի՞նչ ին անում համաշա
Մարդիկ իրանց բաղչումը։

Ծաղկապատիկ ծառի տակ
Միր լոթիքն են նստոտել.
Տկճորնիրն ու խնլադէք,
Իրանց բոլոր մօտ արել։

Ա՛ին մինի կենաց ին խմում—
Մեռելոց ու կենդանեաց,

Մին մինի բոլաղն ին խրում
Շամփուրներով խորոված։

Հաղար-փէշէն լի գինով
Կըկըլացնում, խըմում ին,
Տիկը բռնած պինդ ձեռով,
Իսկի ասիս՝ թողնում ին։

Վաչալ գըլուխ զուռնաչին
Հառաջ է փըչում,
Տիմպլիպոն լըսողի
Ղուղն ու ականջն է տանում։

Ներ պատուելի քաղքըցու
Աչքը ճակտին է թըռել,
Դամաղին կըպել լեզուն—
Էլ չի ուզում նա լըռել։

Վաղքըցու գոզալ քալին
Մարդիցը յետ չէ մընում,
Ձեռին առած մինծ կօվզին,
Զօռ է տալի կախէթուն։

Դրըմբացնում է դահիրան
Իրա փափուկ մատներով,

Պար է գալի լեզգինկան,
Աղունակի ոտներով։

Լատի՝ Պիկոն Զուլֆին
Քընաթաթախ գլուխ է,
Ինտի՝ Վանոն Զալֆին
«Երթի քալին» մրուտ է։

Լա ին անում Համաշա
Մարդիկ իրանց բաղչումը,
Թե սիրում իս թամաշա
Պրտիս իլի քաղքումը։

ՕՐՕՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ։

Քընէ, քընէ, իմ Հայրենիք,
Իմ կամոցին Հայաստան,
Ես քեզ օր օր կ'ասեմ մեղմիկ,
Որ չըզարթիս անգուման։

Քանի՞ դարեր այդ խոր քունը,
Քեզ կաշկանդել, կապել է,

Քրնի սերմունք, ասես, Մորիէն,
Լոկ քու վրայ թափել է։

Դու ի՞նչ զարմանք. ազգ ու աղինք
Միշտ լաւակամ քեզ համար,
Քունդդ վզդումել շուղելով՝
Օրօրում են անդադար։

Քեզ . . . . թուր ձեռք բռնած,
Մարդ չի թողնում քեզի մօտ.
Թէ մօտ եկան՝ դարձեալ չէ՛ փոյթ,
Ունի շատ ռումբ, շատ վառօդ։

Ու աչքերդդ չի խոտղեն
Վառ շողերդ արեգին՝
Ընթափանցիկ ու մեծ ասպար
Ունի բռնած իր ձեռքին։

Կամ թէ՝ անուշ քրնիդ խափան
Զլինին նաև քու որդիք,
Ըսպառազէն պահապաններ
Դոցա վրայ կան հերիք։

Թէ ճիշ բառնան՝ այն ժամանակ
. . . . . .

Այդ պատճառաւ հէնց քու որդիք
Եւ երկչոտ են, և զգաստ։

Երդ՝ դու ննջէ ծանր քընով
Ու մի զարթիլ շատ դարեր.
Պարտքն աշխարհի դու տուել ես,
Կատարել ես շատ բաներ։

Ունիս քաջեր (թէև մեռած),
Ունիս գրքեր անհամար,
Ախրալի գործք քու զաւակաց
Կ՝անցնեն, կերթան դարէ դար։

Ստուածախօս քու լեզուն է,
Ծոցդ՝ Դրրախտ երկրաւոր,
Նոյայ սերունդք են քու որդիք,
Դէհ, Հայաստան իմ, օր օր։

Երբեմն դու խիստ լաւ կ՝անես
(Այս քեզ խրատ իմ բարի,
Հաւատացիր, սրտով բաղձամ,
Որ այդ ճշդիւ կատարի)։

Մէկ սեպհական զաւակներիդ
Տաս խրրատներ մայրական,

Որ կործանած իրանց գահը
Վերականգնել չի ջանան։

Շուտ շուտ ղրկէ քարոզիչներ,
Սևազգլուխ, մրքաւոր,
Որ յորդորեն ապրել նոցա,
Թէև ստրուկ, բայց անդորր։

Խաղաղասէր կեանք քարոզին,
Մեծ մեծ յոյսեր երկնային,
Աշնիւ զգացմանց ցընորք ասեն,
Անօգտաւէտ բընաւին։

Չի հասկանան վախճան կենաց,
Կոյր են եկել՝ կոյր երթան,
Կրօնքն էլ ինչպէս հարք կը մեկնեն,
Նոքա այնպէս հասկանան։

Ահաւոր կրօնն է, ասեն, պասը,
Ժամուց տալը յարգոյ հարց,
Կուշտ ուտելը, ճոխ ապրելը—
Այս է վախճան մեր կենաց։

Ողբալի՜ հաւան մեր Հայերը,
Թարի խրատը լսելով՝

Զեն վրդովել, ու քեզ կուտան
Լաւ կշտանալ խոր քընով։

Պէհ, իմ պառաւ մայր Հայաստան,
Քընէ անոյշ ու անդորր.
Այսպէս յաւէժ քեզ կը կարդան
Ազգ ու ազինք օր օր օր։

ՀԱՑ ԵՒ ՀԱՑՈՒԹԻՒՆ։

Ո՞վ է Հայը. մի՞թէ նա է, որ խօսում է Հայ լեզուով,
Եւ կամ՝ որի մականունը յանդում է ԵՆ մասնիկով,
Որ ուտում է ամենայն օր ճաշին տօլմա ու փիլաւ,
Կամ՝ պարծանօք միշտ հագնում է Հայի գլդակ ու Հաւ։

Ո՞վ է Հայը. մի՞թէ նա է, որ գընում է Հայի ժամ,
Ու տարէնը հաղորդվում է խիստ սակաւից՝ չորս անգամ,
Որ կեանքումը պաս չի կերել, ծոմ էլ պահում է նոյնպէս,
Յօրանջելիս խաչ է կնքում բաց բերանն ու երես։

Ո՞վ է Հայը. մի՞թէ նա է, որ տեսնելիս տէրտէրին
«Օրհնեա՛ի տէր» պատասխան ունի ամեն բոպէ իր բերնին,

Որի համար մեծ ամօթ է, նաև մեղք է մահացու,
Թէ Զատիկի թափթափումները շուտէ թերխաշ կարմիր ձու։

Ըն՛է, սիրելիս, ազգութիւնը չէ արտաքին արարմունք,
Հայ ծընելդ անգամ՝ չի տալ քեզ Հայութեան իրաւունք,
Ան՛է կամ Դ՚ մնկանունդ վերջի վանկի մասնիկը,
Կարմիր ձուով կամ թէ անձու կատարում ես Զատիկը։

Պալլա-փաչա կամ թէ բօրշէ ամէն օրուայ կերածդ,
Սնուցուկ, պայլոս կամ թէ շուխայ է վրայի հագածդ—
Ողջը մին է. ծէսով չես տալ ազգիդ վնաս կամ օգուտ,
Ցեղը մընայ ազգութիւնը, ոչդ նաև վարձ չէ հոգուդ։

Ինչ դու Հայ ես՝ Հայութիւնդ պիտի յարգեսանպատճառ,
Հայաստանը պիտի լինի յուսոյ աստղ քեզ համար.
Օտարները դու մի ատիլ, մի էլ սիրիլ կուրօրէն,
Բայց քու Հայի օգուտները միշտ վեր դասէ ամէնէն։

Ազգուեստ, ուսում, շրջելարուեստ տարածէ Հայ ազգի մէջ,
Բայց բռնութեամբ միշտ հեռացուր նորա մէջէն կրօնի վէճ.

. . . . . .
. . . . . .

Լծո՛ղ, սի՛րելի, այդ խնդիրքը, աչքդ դարձո՛ւր դէպ հարաւ,
Թիւր բիւր հոգիք դու կը տեսնես կորած դորա պատճառաւ.
Բայց մինչ այսօր այդ խնդիրքը մընացել է անվճիռ,
Թոյլ խելքո՞վդ աշխատում ես քակել անքակ այդ կնճիռ։

Սիրէ՛ ազգդ ո՛չ լոկ խօսքով, սիրէ՛ ինչպէս քու անձը,
Նորա օգտին, թէ պէտք լինի, զոհէ՛ բոլոր քու գանձը.
Մի՛ խնայել կեանքդդ անգամ, արիանդդ բե՛ր նորան զոհ,
Ո՛չ այն յուսով, որ քու ազգը իսկոյն լինի քեզի գոհ։

Ստակ սէրը չի պահանջում ամենևին տրրիտուր,
Թէ տուածը յետ առնուի՝ դորան կասեն առուտուր.
Բայց վա՜յ նորա որ անրզգայ են իւր ազգի վիճակին,
Հազա՜ր անէծք նոցա վերայ, երբե՞ կ շան պէս ստակին։

Լծէդու Հայ ես՝ գիտե՞ս արդեօք ո՞վ էր ազգիդ նախահայր,
Ո՞ր տեղ, ո՞ր կողմ նա ընտրել էր ազգին համար Հայ աշխարհ.
Քանի՞ տարի անկախ մընաց Հայը օտար ազգերից,
Ի՞նչ էր պատճառ, որ նա ընկաւ իր առաջուայ փառքերից։

Ո՞ր ցերուեցաւ քու խեղճ Հայը, ունի՞ այժմ օգնական,
Կա՞յ մի հնար, միջոց կամ յոյս նորա կրկին նորոգման.

Թէ կայ հընար՝ դու պարտաւոր ես անձրդ աղգիդ զոհ անել,
Խիստ կըտրտանք, սաստիկ տանջանք, սով ու ծարաւ միշդ տանել։

Դու պատրաստ ես թողնել կայքըդ, ծընողք, եղբարք, սիրական,
Սիրելըդդ տեղ կրծքիդ սեղմել միշտ մահաւոր հըրացան.
Դու պատրաստ ես անվախ երթալ թշնամի սուրի դէմ,
Սարսափելի մահըդ տեսնել դու կարող ես ծաղրադէմ։

Ինչդ ժամանակ քեզ Հայ կ'ասեմ . . . . . .
. . . . . .
Բայց թէ փորըդ տօրմաներից, կամ փըլաւից տըռաքի,
Հաւատացիր՝ ուտելովըդ օգուտ չես բերիլ աղգի։

ԳԱՆԳԱՏ ԲԱՂԴԷՆ։

Ինչ իմ շար բաղդ, քեզ ի՞նչ ասեմ, արդեօք քեզ ի՞նչ անուն տամ,
Թէ կոյր ասեմ՝ իրաւ կոյր ես, բայց այդ գեռ չէ բաւական,

Դու անմիտ ես, դու յիմար ես, նախանձոտ ես չափա-
զանց,
Դու ատուած չէս, ինչպէս կուզես քեզ հին դարը դիւ-
ցազանց.
Պոյր է և քու թշուառ կեանքը և այդ պաշտօն տրուողը,
Ո՞չ բաղդ, այլ աղբ քեզ չէի տալ՝ պարարտացնել կոշտ
հողը.
Այդպէ՞ս խրոշմով կատարում ես Արամազդայ պատուէրը
Ա՞խ թէ իջնէր նա երկնիցը, տեսնէր առատ հունձերը
Քու այլանդակ սերմնացանին, էլ ի՞նչ սուր սուր նա սը-
լաքներ
Պիտի շաղ տար քու գլխին.....
Քեզ շատ անգամ ես տեսել եմ երազապինդ աչքերով,
Պոյր ես արդեօք, թէ՞ գիտութեամբ մեռ ես գալիս այդ
կերպով.
Բայց կ'ուզէի, որ դու մէկ օր հանգամանքէ ըստիպուած
Այս աշխարքը ծայրէ ի ծայր մէկ ժուռ գայիր աչքաբաց.
Ի՞նչ ահարկու տեսարաններ պիտի բացուէր քու աչքին
(Ցընորամիտ արբոմբոզ լի են երկիր ու երկին).
Կըտեսնէիր մոլի վագրեր հոմիս դրրած հօտերուն,
Ցնոց ագուռներ, անյագ գայլեր միշտ անպակաս մսոտ-
բուն.
Կըտեսնէիր դու ժիր մեղուաց բուներ՝ արջի քանդելը,
Բիւր մի անմեղ միջատների հացը՝ ծոյլի ուտելը.

Կրանանէիր դու վարուժան մենակ մեռ մեռն կարդալիս—
Դա իր սիրուն աղունակի կարճիկ կեանքիին է լալիս,
Ամպի մէջէն վէր սըլացաւ սըրաչ շահէն դէպի ծառ,
Բռնեց սիրուն աղունակին, անխիղճ արաւ շորս պատառ։
Թողնենք մի կողմ անբաններին՝ բանականի մէջ մնոնենք,
Դոյն զրկանքը, նոյն նեղութիւն, անշուշտ, և հոն կը-
զտնենք.

Ցե՛ս դու, թշուառ հողագործի զարնանային վաստակը—
Լափլիզեցին մարախները ցորնու նորածիլ հասակը.
Դորա ներհակ՝ նաւահանգիստ մրտաւ նաւը փարթամին,
Ո՛չ մի վնաս չի հասցրուց նորան ուռուցիկ քամին.
Ցե՛ս այս խղճուկ իմ կարճիս—առոյգ, պարկեշտ ու գի-
տուն,

Բայց հօրական փող չունենալով՝ հաճելի չէ ամենուն.
Որան հաւասար չեն յարգում իշխանին կամ հարստին,
Բացէ ի բաց հեռանում են, որ տրա մօտ չի ներստին,
Եվ նստում են նորա մօտը, որի ջիրը ոսկի կայ,
Չեն ամաչիլ աստուած ասել հարստին՝ թէ խօսքի գայ...
Ասա՛, խնդրեմ, ինչո՞վ մեղաւ այն խեղճ, գիտուն պա-
տանին,

Մի՞թէ աղքատ աշխատ՝ գալը մարդիկ յանցանք համարին
Դրդմա գը լուս իշխանորդին ինչո՞ւ ի վեր գասնցաւ
Սոկրատէսի արդեօք լեզուով յանկարծակի խօսնցաւ...
Ահա այսպէս շարութիւնով լցել ես դու աշխարքը,
Մի՞թէ չես գալ սարսափանքի տեսնելով քու արարքը։

ՓԱՓ ԵՎ ՇԱՀ-ԶԱԴԱ։

Փառանգի փափը խիստ փողվոր է,
Վեհարանը փառաւոր է.
Լաւ գինիի շատ սովոր է,
Նեռայի՞ ես փափ չէի։

Ա՜խ մէ, կըրիմ փափի գլուխը,
Անկնիկ ի՞նչ իմ անում փուղը,
Լաւ է ուտիմ հաց ու սուխը,
Քանց անկընիկ փափ ը լիմ։

Ը՜յ, Շահ-զադի կեանքը լաւ է,
Կերածը նուշ ու փըլաւ է
Ինկտերանց թիւը անրաւ է,
Թողէք որ Շահ-զադա ը լիմ։

Խուղիմ գլուխը Շահ-զադին,
Լըսելով Մահմադի խրատին
Գինին իսկի չի դնում բերնին,
Բաս չուզացի քու Շահ-զադին։

Ամեն, կուացիր իմ ճըտին,
Որ ջանը դուղ ընկնի փափին։
Հազար-փէշուամն ածէք գինին։
Որ էրվի սիրտը Շահ-զադին։

ՄՈՒՐԱՑԻԿ ԿԻՆ։

Հնուրտ է օրը, ձիւն է գալիս սև ամպերէն սաստկագին,
Եկեղեցու դրրան կանգնած՝ աղօթում է մի խեղճ կին.
Հին հալաւը չէ պաշտպանում խեղճի մարմինը ցրտէն,
Ձեռքը ձրգած նա մուրալով հաց է խնդրում ամենէն.
Ամառ, ձրմեռ նա գալիս է խարխափելով պատէ պատ,
Դրրան շէմքը սուրբ տաճարին Աստուածամօր անարատ.
Կայր է աչօք, եղե՞ւկ նորա, լոյսն արևու չէ՛ տեսնում.
Ա՜խ, գրթացէ՛ք նորա վրայ, ողորմութիւն է խնդրում։

Ո՞այց դուք գիտէ՞ք ո՛վ էր եղել թշուառական այս կինը,
Որի գէմքը արդ խամրած է, զաղրելի է մարմինը.
Սա թատրօնի մի օր հրաշքն էր, քաղաքացոց սիրելին,
Արդ չի կար որ չի զմայլէր դորա սրտառուչ ձայնին.
Երիտասարդք, ծերք և կանայք՝ մէ՛կ ժպտալով, մէ՛կ լալով,
Ապշած էին դորա խօսքին, դիմաց գեղին նայելով.
Ա՜խ, քանիսին անուշ երազ տուած կայ դա իր կեանքում,
Այժմ տեսէ՛ք, ձեռքը ձրգած՝ ողորմութիւն է խնդրում։

Քանի՞ անգամ սա թատրօնէն արտորալով դուրս գալիս,
Երբ որ կայտառ երիվարքը կառքը առած տանելիս,

Օդը լցուած աղաղակով այն ապշեցած բազմութեան՝
Շուք ու հոշակ պարգևում էր դորա փառաւոր անուան.
Իսկ տարփաւորն ըսպասելով դորա դրբան անհամբեր,
Երջանիկ էր, եթէ շրթէն թեթև ժպիտ մի քաղէր.
Իշխանն հրլու սորա ձայնին, հրամանին էր ըսպասում,
Այժմ սորան լսող չի կայ, թէև մուրալ չէ դադրում։

Բայց, աւաղ քեզ վիճակ մարդկան, մի օր բաղդի կոյր կամքէն
Տրկարացած՝ զրկուեցաւ քաղցր ձայնէն ու աչքէն.
Այնուհետև անտուն անտէր մնաց է գալիս մուրալով,
Քրսան տարի այդ վիճակում ես անանում եմ միշտ լալով.
Երջանկութեան իր օրերը սորա ձեռքը գրեթէ առաւ
Լիարերան միշտ օրհնել են թշուառ, հիւանդ ու աղքատ.
Բայց այդ ձեռքը, որ ոչոքի գութ ու խրնամ չէր մերժում,
Այժմ այլոց գրթոյն կարօտ՝ ողորմութիւն է խնդրում։

ՔԱՋ ՎԱՐԴԱՆ

ՄԵՄՐԿՈՆԵԱՆԻ

ՄԱՀԸ·

ԲԸՆԸՕՑԵՂԹՈՒԹԻՆ·

ՔԱՋ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ

ՄԱՀԸ.

—

ՆԱԽԵՐԳԱՆՔ.

1.

Ավ լուսին լուսին, էլ քանի՞ էդպէս
Դալկացած, տրժգոյն, տրխուր երևիս.
Այդ թրխպոտ ամպերն քեզ զարհուրեցրին,
Բոցոտ կայծակներն քեզ այլայլեցին.
Երկնից կամարի գեղը դու ես լոկ
Աստղց մէջ չըկայ քեզ նման ոչ ոք.
Մինթէ նախանձից թափել ես գոյնըդ,
Զէ՛, ուրիշ գաղտնիք ունիս սրտումըդ.
Ասա՛ ինձ, լուսին, ասա՛ սրտաբաց,
Ինչո՞ւ է, ինչո՞ւ դէմքըդ այլայլած.

Երբ մենք սև օրուան ունինք կաբեկից,
Ասում են, կէսն է պակասում մեր ցաւից.
Թշուառին թշուառն է միշտ մխիթար,
Որտեղ կրգտնիս դու քանց իս թշուառ.
Քեզ պէս մրտատանջ, քեզ պէս անտերունջ,
Արտումն գաղտնիք, բայց լուռ, անմրուունջ
Անցնում եմ օրերս, վա՜յ գլխուս տալով,
Մարդկանց մէջ ուրախ, միայնակ լալով.
Լալիս եմ, լալիս, արցունքս յորդոր
Ցօղում, վազում են աչքիցս ամեն օր.
Չեն, չեն պակասում հառաչանք ինձնից,
Եւ այս սև օրուան չունիմ կարեկից.
Ամեն շնչաւոր ունի մի ընկեր,
Միմիայն ինձնից պիտի պակսի սէր.
Եթէ դու էլ ես թշուառ ինձ նման,
Իմ քաղցր խօսքը կ'լինի քեզ դարման.
Արտիդ խորհուրդը բա՛ց ինձ անկասկած,
Ինչո՞ւ է, ինչո՞ւ դէմքդդ այլայլած.

2.

Լուսինը դող դող ամպեր ճեղքելով,
Ինձ պատասխանեց լալագին ձայնով.
Լսէ՛, Մուսային պարկեշտ որդեգիր
(Թէ գլխուս անցքէն ես հետաքրքիր),

Շատ դար դէս ու դէն ունայն շրջելով,
Քեզ միայն գրտայ ըզգայուն հոգւով.
Բայց մինչև այսօր չի գրտայ ոչ ոք,
Որ իմ տխրութեան տանէր քիչ մի հոգ.
Ոչ ոք չը խլեց դարդը իմ սրտից,
Շատ դար ինձ ոչ ոք չեղաւ կարեկից.

Շատ դար եմ պահել մայրագութ խնամով
Օտարի գաղտնին սրտիս մէջ. բայց ո՞վ
Մի օր բարձրացուց աչքերը երկին
Ու կարեկցաբար հարցուց «ո՞վ լուսին,
Ինչո՞ւ ես տրխուր, գունաթափ դիմաք,
Ի՞նչ ցաւ է սրտումդ, ի՞նչ վիշտ, ի՞նչ մորմոք»։

Գո՛հ եմ, գոհ քեզնից, պարկեշտ բանաստեղծ,
Ինձ սփոփեցին քու խօսքերն անկեղծ.
Ինձ՝ որ համ աշխարհ կարծում է անբան,
Միայն քեզ համար կ'բացուի 'մ բերան,
Քու անոյշ խօսքին և ես փոխարէն
Կ'պատմեմ, ինչ որ անցաւ իմ գլխէն.

Դու այն կ'պատմես բանիս ներդաշնակ,
Յետնորդ կը հիւսեն քեզ դափնեայ պրսակ.
Թո՛ղ քեզ խուժանը ատէ, անարգէ,
Դաւ այդ անուան քու շուք ու փառք է.
Ի՞նչ սէր ես խնդրում մարդկութեան ցեղից,
Երբ վարդ է քաղուել տատասկոտ տեղից,

Սէրը նրմանից պէտք է պահանջել.

. . . . . .

3.

ԼՈՒՍՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.

Ի հոն են ծնել մեր հարքն առաջին.
Որք յետ Ադամայ գԱստուած օրհնեցին։
Ն-հ-գիր։

Դէհ, լսէ։ Մի օր կապուտակ կամարն
Ողջ ծածկել էին աստղեր անհամար,
Ես էլ հարսի պէս նոցա մէջ փռուած,
Հանգարտ գնում էի դէմքս քօղ առած։
Անցայ լողալով ծովը Պոնտոսի,
Անցայ քերելով կատարք Կաւկասի.
Տեսայ երեսս Գեղամայ ջրումը,
Զովացայ փոքր ինչ ձկնոտ Վանումը,
Խցյս տալով անցայ շատ տարեր, դաշտեր,
Ուր խոր լռութիւն, հանգիստ պատել էր.
Անխոնջ մրջակը հողն վրայ պառկած,
Զովութիւն խնդրում էր մարմնուն յոգնած,
Եզն ու գրրատտը նոյնպէս վաստակած,
Խաղաղ դաշտի մէջ էին տարածած.

Հայոց աշխարհիկ բերկրութեան տեղիք,
Հայոց բընութիւն, ա՜խ, Հայ մանկըտիք,
Գեղորէք, աւանք, դաշտք ու արտորայք,
Քաղաքք մարդաշատք, շէնք ու վանորայք,
Ո՞ւր էք, ո՞ւր հիմի, ինչո՞ւ շուտ կորաք,
Ո՞վ ձեզ կործանեց, ո՞ր ձեռը վայրագ.
Այն գիշեր երնեկ էր Հայոց երկրին,
Աստղերն էլ երկնից նորան փառք տուին.
Ու ես անցնելով նորա վերայից,
Զէին կշտանում վերան նայելից։

Կ.

Ուղիղ չորս շաբաթ այն օրից անցան,
Կատարեցի ես դարձեալ մի նշան,
Շտապով անցայ քաղաքներ, գեղեր,
Լեռներ, ծովակներ ու շատ շատ տեղեր,
Կարօտով մրտայ Հայաստան աշխարհ,
Դարձեալ գիշեր էր. մրոայլ ու խաւար
Ցիրել էր Հայոց առատ դաշտերը.
Բայց, ա՜խ, ո՞ր էին հունձ ու արտերը,
Ո՞ւր էր այն Հայոց անխոնջ գեղջուկը,
Ո՞ւր էր հաստավիզ նորա գոմշուկը,
Ո՞ւր էին խնդձի արօրն ու սամիք
Կամ ո՞ւր մշակի պարտեզն ու պղկիք.

Սև ծուխ էր պատել Հայոց երկնքին,
Գեղեր, քաղաքներ տուած կրակին,
Անողորմ էրվում, տոչորվում էին,
Բոցեղէն լեզուքն հասնում ամպերին,
Դժոխք էր տեսիլն խեղճ Հայոց երկրին...
Բայց քեզ ո՞վ նիւթից այդքան մեծ չարիք,
Երկնացող պարտէզ, Հայոց աշխարհիկ,
Նախանձ էր տիրել այդ մարդի սրտում.
Թէ օձ էր բնակել նորա չար հոգում.
Այո՛, նախանձ էր, նախանձ դարևոր,
Որ մարդուս սիրտը պրելով բոլոր,
Իսկ և իսկ սատանիկ, ահեղ ճայթմունքով
Դուրս ցայտում, վազում է մեծ հոսանքով,
Ինչպէս այն սարերն դրսից հանդարտիկ,
Որոց վրայ հալվում չէ փափուկ ձրնիկ,
Յանկարծ կայծակներ ծընում են ծոցից,
Քաղաքներ ամբողջ պրվում են բոցից.
Այդպէս նախանձի սերմունք սրպրտած
Յաղկերտ արքայի սրտի մէջ, յանկարծ
Հարիւր հարիւրով պատուղներ ծնուցին,
Պրտո՛ւղք—արժանի գեհենի հրձին,

5.

Տեսայ Աւարայր սարսափած ահից,
Ընթիւ զօրք նորա տիրել էր Պարսից

Հայոց գնդիկն էլ համարձակ ու քաջ
Քրմծիծաղ դէմքով կանգնած էր առաջ։
Ծագեց արևը. կատաբք շողշողուն
Երևան եկան Հայոց տարերուն,
Անօսր ամպերը կարմիր, ծիրանի
Գոյներով ներկած՝ զարդ էին երկնի.
Ուեսիս կարդաց նորեկ արևուն,
Քաղցր տաղերով արտուտն արտերուն.
Տզմուտը հեռուանց անոյշ խոխոչով
Քերում էր ափերն փռուած վարդերով.
Հանդէս էր բնութեան. միմիայն մարդը
Այնօր չէր կազմում բնութեան զարդը.
Ուրիշ մրտածմունք էր նորա հոգում,
Զար ոխ, չար նախանձ ու ատելութիւն.
Ճակատ ճակատի կանգնած անվեհեր,
Հայոց քաջորայք, պարսից կտրիճներ,
Պատրաստ են շափել ուժերը բազկին
Արեամբ կշտացնել ծայրը նիզակին.
Սանձակոծ ձիանք, անձռնի փողեր
Հոգն էին փորում ոռով անհամբեր....
Ցանկարծ բանակից դուրս եկաւ ՎԱՐԴԱՆ
Ու ահեղ զօրքին տուեց նա նշան։

—

6.

Ցառանչ մատիկը ինձ լրսել,
Շառաւիղք քաջին Հայկոյ,
Եւ կամիմ ձեզ արդ պատմել
Զապդասէր գոյն ՎԱՐԴԱՆԱՆՑ։
Գ—Բրիէլ Պ—ոյ—ն—ն։

Ա ՎԱՐԴԱՆ—զօրավար իր ազգին ընտրած,
Արևան դաշտի մէջ ՔԱՆՋ հանդիսացած.
Սրբոտացաւ Հայոց գառը վիճակին
Ոտք հանեց նոցա ընդդէմ գոռ Պարսկին.
Զրկարաց տանել նորա վեհ հոգին
Կրօնի հալածմունք սիրելի ազգին,
Թրքոտն և խաչով տուեց մեծ երդում—
Ցաղթել կամ փառքով ընկնել գոռ դաշտում.
Եւ զօրքը նոյնը երդմամբ կրկնեցին,
Պարմինքն ու հոգիքն ազգին զոհեցին։
Վերին ներշնչմամբ Վարդան քաջ գիտէր,
Որ օրհասականն այն օր վերջինն էր,
Բայց նա ըստրկի կեանք վարել չընտրեց,
Ծննդով ազնիւ, ազնիւ մահ խնդրեց.
Զէր նա կուրացած նշոյլքով բազդին,
Բայց չէր էլ զգուել օրերով կեանքին.
Նա քաջ էր մարմնով, հոգւով էլ վեհանձ,
Կիրքերը նորա ընաւ չէին անասնձ.

Առտընին կեանքում՝ ծընող բազմագութ,
Բանակի մէջը զօրավար հրմուտ.
Պարիսպ ամրակուռ Հայրենեաց համար,
Ամեն մի Հայի յոյսն ու մրխիթար.
Բայց իր թշնամեաց...ահեղ հալածիչ
Դէմ ու դէմ կռուող, բայց ո՛չ ներող պատրիչ.
Քանի որ ոսոխն թոյր ունէր ձեռին,
Վարդաններէր նորա ահեղ թշնամին.
Բայց երբ դընէր նա զէնքն իր գետնին,
Վարդանն էր նորա պաշտպան առաջին

. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .

7.

Թէրնդաց սրտերը արի Հայերուն,
Սանձերը թողած ներժոյգ ձիերուն,
Աջ ձեռքին թերներ, ձախերին վահան,
Քա՛ջ քա՛ջ վազ տուին Պարսից յանդիման.
Գրոհն էր ահեղ սըրոտա Հայերուն,
Գետերի ներման թափեցին արիւն.
Մահը անփախուստ էր նոցա աչքին,
Խիստ թանգ ծախեցին մահերը Պարսկին.

Երկար չքաշեց այն անշամ կռիւը,
Շատ շուտ քիչացաւ Հայերու թիւը,
Մընացորդք քաջայ նախանձ բերելով,
Ընկան կոտորած Պարսից թրելով.
Մընաց լոկ Վարդան իր բուռ քաջաց հետ,
Նորա առաջ չունդք Պարսից անհեթեթ.
Զբսարսեց Նորա վեհանձն հոգին,
Տեսնելով անշուշտ վրտանգ առաջին,
Սրբեց պեխերը, նայեց աջ ու ձախ,
Բուռ քաջ՝ բուն ասաց դէմ ծիծաղ.
«Տղե՛ր, ահա՛ մեզ մի կարճ ճանապարհ,
«Որով այս երկրից կերթանք նոր աշխարհ,
«Ուր մեր քաջ նախնիք կան մեզ անհամբեր
«Փառաց պրսակով շատ ու շատ դարեր.
«Տանք վերջին բալեն աշխա հին Հայոց,
«Որ սընուց գրիթով մեզ տրղայ տիոց.
«Առանց Հայրենեաց մեզ մութէ աշխարհ,
«Հայաստանն էր մեր միակ մրխիթար.
«Կորաւ Հայ, ստանն, էլ ի՞նչ յոյս մընաց,
«Մեր կեանքն ի՞նչ է, թէ ոչ սուգ ու լաց.
«Այո՛, տանն ունինք ծնողք, ընտանիք,
«Թո՛ղ կորչին, երբ որ կորաւ Հայրենիք.
«Գո՛նէ մեր յետնորդք կ'ասեն մեզ համար,
«Արցունք թափելով աչքից անդադար,

«Երանի՜ էր ձեզ, ո՞վ որդիք փառաց,
«Որ դուք չըտեսաք կորուստն հայրենեաց.
«Ձեր կեանքն էր ազնիւ՝ ազնիւ մահ առիք,
«Ձեզմով կըպանծայ յաւէտ հայրենիք,
«Ձեր կեանքն կ'լինի յետնոց օրինակ,
«Ինչպէս մեռնելը ձեզնից սովրեցանք.
«Ինչ որ ունէիք՝ Ազգին արիք զոհ,
«Ազգն յաւիտեան կըմնայ ձեզ գոհ.
«Քը՛ոից յառնելիս, կամ քուն մըտնելիս
«Միշտ ձեզ կըյիշենք մենք աղօթելիս.
«Մեր անմեղ մանկանց տրխուր օրօրով
«Ձեր գլխու անցքը կըպատմենք երգով.
«Ձեր անկման տեղը կրօնասէր մարդիկ
«Կըդարձնեն անշուշտ աղօթից տեղիք,
«Ձեր մարմինն ամեն մի Հայի համար
«Կըդառնան մասունք որբոց փրկարար.
«Հանգէ՛ք, դիւցազունք, հանգէ՛ք յաւիտեան,
«Ձեզ միշտ կը յիշէ ձեր մայր-Հայաստան».
Ասաց ու լռեց։ Երկու աչերից
Ցօղացին արցունք ինչպէս ցօղ երկնից
Ուժգին ախ քաշեց անմխիթար սրտէն,
Բայց այդ ախը չէր թշնամու ահէն։

8.

Բայց ինչո՞ւ լացեց այդ արի մարդը,
Որին անծանօթ էր ահն ու դարդը.

Գուցէ թէ յիշեց նա այդ բոպէին
Տանը անպաշտպան թողած ընտանին.
Որ շուտով կ'ընկնին ձեռքը թշնամուն,
Այդ ազատ կեանքէն կ'երթան գերութիւն.

Ձեռակապ, քաղցած ու հազար չարիք
Անմեղ տանելով խեղճ Հայոց կնանիք,
Պարսից սիրոյն պիտի հարձք լինին,
Կամ կոյր հեռուոց Զրդաշտի կրօնին.

Կ'անցնին սև օրեր, կ'անցնին և տարիք,
Այդ զեղջ կեանքումը կ'մոռանան չարիքն
Իրանց հալածչաց, կըմոռանան Հային,
Որք նոցա սիրոյն այդքան ցաւ տարին.
Այն թռչնուն նըման, որ և վանդակում,
Անտառէն զրկած՝ գրտաւ խնդութիւն,
Անոյշ երգերով, հօրերէն սովրած,
Ունկը փաղաքշեց իր չար թշնամեաց...

Գուցէ նա լացեց Հայի վիճակին,
Անկումը գահին, կորուստը թագին,
Որ հազար ու բիւր կրելով ցաւեր,
Անկործան պահեց նոցա շատ գարեր.
Ինչո՞ւ.... որ մի օր յիմարի կամքից
Ընդա՞ռձ զրկուի հօրական փառքից.
Ա՜խ, գառն էր նորա հսկայի սրտին
Տեսնել յաղթանակ Պարսից ոխերիմ,

9.

Կարծիք կայ, որ հոգին ունի մի գաղանի զորութիւն իւր ապագայ վիճակը նախագգալու։

Եվ սև պատկերներ՝ սև քօղի նըման
Վըրդոված մըտքին եկան յանդիման.
Տեսաւ Հայաստան ոռնակոխ արած,
Քաղաքք մարդաշատ իսպառ աւերած.
Երբեմն ընակիչք տէր շատ ազգերի,
Այժմ կրօնամոլ Պարսկին են գերի.
Փակած են դրռներն նոցա ժամերուն,
Անդ էլ չի հնչում սրբոց աղէլուն,
Եւ նուիրական նոցա սուրբ տեղիք
Էլ չեն այցելում կրօնասէր մարդիկ.
Այրուձին Հայոց, այն քաջ այրուձին—
Ո՛չ Հային պաշտպան կ՝լինի, այլ Պարսկին.
Եւ գանձք լեռներուն, բերք առատ երկրին
Ողջ պիտի լափէ անհաշտ թշնամին.
Հայը անճարակ՝ կըմոռնայ ազգը,
Կրօնն, և՛ լեզուն, և՛ հօրանց՝ փառքը,
Հայկ, Արամ, Տիգրան և այլ դիւցազունք
Ո՝երևին նոցա պատիր շաղփաղփունք.
Եւ կամ՝ լըսելով մեծ գործք ներսիսին՝
Գուցէ՝ զաւակունք նոցա կասկածին.

Հրաշեայ, Զարմայր և Վահագն արին
Երբէք չեն անցնիլ նոցա մրոտքերին։

10.

Ա՛յա լուռ էր. բայց այդ լռութիւն խորին
Նրման էր անհուն ու անդորր ծովին,
Որ մեղմ ծրփալով, նաւաստաց սրտում
Յաջողակ ճանփու յոյսեր է ծընում.
Բայց վա՜յ է խնդձիկ անփորձ նաւորդաց,
Թէ հասու չեղան նորա պատրանաց,
Կըմերցնէ ալիք մինչ ամպերը,
Խաղալիկ կ՚լինին նորան նաւերը,
Կուլ կ՚երթան անյագ, փրփրած ծովին,
Ո՞վ դէմ կը կենայ կատաղած հովին...
«Քաջե՛ր, ասաց նա, ինչո՞ւ էք տրխուր,
«Յոգնա՞ծ է ձեռներդ, թերե՞ր չեն սուր,
«Նո՞ր է մեզ համար նիզակ խաղացնել,
«Հայոց թշնամու կեանքը կարճացնել.
«Պարսեցա՞ք Պարսկի անթիւ զօրքերից,—
«Մի Հայը քաջ է նոցա հարիւրից.
«Յիշեցէ՛ք Հայկին, որ բուռ քաջերով
«Դէմ կեցաւ Բէլին, հոգին անխրոով
«Զարգեց, կործանեց. մընացորդք ցրուեց
«Եղան Հայերից, ինչպէս շոր խրոխ։

«Մահից վախեցար. ամա՞թ է Հային
«Իր ազատ կեանքը փոխել ըստրկին.
«Մա՜հ, մա՜հ, ե՛կ շուտով, սեցո՛ւր իմ կեանքը,
«Ինչպէս սեւացաւ Հայերու փառքը.
«Դէ՜հ, վերջին անգամ հօրանց տաղերով
«Կռուենք ու մեռնինք Պարսից թըրերով»։

ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ ԵՐԳՈՒՄ ԵՆ

Օ՛ինուոր էի Հայոց ազգին մրտերիմ,
Երբ Հայաստան քարքանդ արեց թշնամին.
Պինդ պինդ ցաւեց սիրտը արի Հայերուն,
Այն օր նոքա թափել տուին գետ արիւն.
Շատ շատ քաջեր ընկան ազգից ու անդից,
Ես էլ ընկայ թշնամիի սուր նետից.
Իմ մարմինը դաշտի միջին է ընկած,
Քրիստոնէի սուրբ օրէնքով չէ թաղած.
Դուն մի՞ մեար աչքդ արցունք օրն ի բուն
Սիրականիդ, իմ սիրական, մրտի՛ր քուն,
Ասուն կուգայ շարագուշակ գուժկանը,
Սուգ, ողբ, կրակիծ նա կընիւթէ իմ տանը.
Երբ որ լսես վաղաժամիկ իմ մահը.
Ա՛ռ երկու թի ու երկաթէ սուր բահը,
Ա՛ռ քու հետը մի ըստիտակ մեծ պատան,
Փորէ խորին ինձի համար գերեզման.

Գերեզմանիս վրայ բլսնի վարդենին,
Վարդը բացուի, աչքը գրաւէ ամենին,
Սոխակին էլ թո՛ղ գրրաւէ նա հոգին,
Քաղցր տաղեր թո՛ղ ներշնչէ սոխակին,
Թո՛ղ սոխակը անցքրս պատմէ ամենուն,
Թո՛ղ լրսողը ողորմիս տայ իմ հոգուն։

ՎԱՐԴԱՆԻ ԵՐԳԸ։

Հիմի էլ լրռենք, եղբարք, հիմի էլ,
Երբ մեր թշնամին իր սուրն է դրրել,
Իր օրհասական սուրը մեր կրծին,
Ականջ չի դրնում մեր լաց ու կոծին,
Ասացէ՛ք, եղբարք Հայեր, ի՞նչ անենք,
Հիմի էլ լրռենք։

Հիմի էլ լրռենք, երբ մեր թշնամին
Դաւով, հրապուրքով տիրեց մեր երկրին,
Ջրնջեց աշխարքից Հայկայ անունը,
Հիմքից կործանեց Թորգոմայ տունը,
Խլրեց մեզանից թագ և՛ խօսք և՛ զէնք,
Հիմի էլ լրռենք։

Հիմի էլ լրռենք, երբ մեր թշնամին
Խլրեց մեր սուրը — պաշտպան մեր անձին,

Մըշակի ձիռքիցն էլ խոփը խըլեց,
Այդ սուր ու խոփից մեր շղթան կըռեց,
Վայ մեզ, շղթայով կապած գերի ենք.
Հիմի էլ լըռենք։

Հիմի էլ լըռենք, երբ մեր թըշնամին
Սոսկալի զէնքը բըռնած մեր գըլխին,
Կուլ տալ է տալիս արտասունք առատ,
Աղէխարշ բողոք վարուց ապիրատ.
Մեր գլուխը լալու Եփրատ ուր պըտռենք,
Հիմի էլ լըռենք։

Հիմի էլ լըռենք, երբ մեր թըշնամին
Լիրբ գոռոզութեամբ լցրած իր հոգին,
Արդարութեան ձայնն հանած իր սրտից
Արտաքսում է մեզ մեր բընիկ երկրից,
Պանդուխտ, հալածեալ, եղբարք, ուր գիմենք.
Հիմի էլ լըռենք։

Հիմի էլ լըռենք, երբ մեր թըշնամին,
Անգոհ մեր բերած ծաներ զոհերին,
Իւր լիրբ, նըզոված ձեռքը կարկառից,
Ազգութեանս վերջին կապը պատառից.
Հայի կորուստը մոտ է, ի՞նչ անենք,
Հիմի էլ լըռենք։

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին,
Արհամարհելով մեր փառքն ազգային,
Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,
Գայլազգեստ գառին մեզ գլուխ դրաւ,
Սուրբ խորան չունինք, արդ ո՞ւր աղօթենք,
Հիմի էլ լռենք։

Հիմի էլ լռենք՝ մարդիկ ի՞նչ կ՚ասեն,
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խօսեն,
Զե՞ն ասիլ, որ Հայք արժանի էին
Այդ ստրկական անարգ վիճակին.
Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք,
Մինչև ե՞րբ լռենք։

Թո՛ղ լռէ մունջը, անդամալոյծը,
Կամ՝ որոց քաղցր է թշնամու լուծը,
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Ե՛կ անվախ ելնենք թշնամու առաջ,
Գոնէ մեր փառքը մահով յետ խլենք
Ու այնպէս լռենք։

11.

Ա՞ստ էր արևը իր մորը մրտին,
Խիտ խիտ նեստում էր ճաճանչն իր յետին,

Տեսնողը կ'ասէր՝ այս անգամ արևն
Տալիս էր երկրին իր վերջին բարև.
Վերջինն էր, այո՛, բայց ո՛չ ամենուն,
Վերջինն էր այն խեղճ, կրտրիճ Հայերուն.
Նորա շողն հետ նոցա վեհ հոգին
Պիտի սրլանար դէպ պայծառ երկին,
Դարձեալ գրոհ տուին Հայք ուժգին ուժգին,
Թնդացրին շարքերն Թշնամեաց զօրքին,
Ապշած մընացին Պարսիկք տեղերը,
Թուվիչ կարծեցին Հայոց խեղճերը.
Մեծ էր կոտորածն Հայոց քաջերուն,
Ցոյց տուին Պարսից ոյժը ձեռերուն,
Աւարայր դարձաւ արևան ճապաղիք,
Դաշտը գէշերով լցուցին Պարսիկք.
Մարդ, փիղ, ձի, կառք զէնք մէկ մէկով էին,
Ո՞վ կը խիզախէր դէմ կենալ Հային.
Ինչպէս լեռ ալիք ծովին՝ անարգել
Ուզում են քարէ եղերք խորտակել,
Վազում են առաջ ահեղ գոռալով,
Դլուժոնքի վայել երգ յօրինելով,
Ժէռուտ ափերին գալիս են հասնում,
Խրփում են, 'ի զո՞ւր, ու յետ են վազում.
Այդպէս և Պարսից ճիգն էր ունայն,
Երբ նոցա առաջ պինդ կանգնած էր Հայն.

Բայց չի կար արգելք խիզախ, քաջ Հային,
Ո՛չ թուր, և ո՛չ նետ, ո՛չ շարք փրղերին,
Նա որդեկորոյս առիւծի նման
Արգելք չէր տեսնում աչաց յանդիման.
Բլրաձև փրղեր գլորում էր գետնին,
Մրժեղ էր թրուում նորան այրուձին,
Այն քաջ այրուձին, որից որ Հելլեն
Դակամուտ եղաւ միմիայն ահէն։

12.

Օրն էր տարաժամ. մարդիկք դադարած,
Փողը հընչեցին՝ մարտին կատարած.
Մութք տարածուեց. աստեղք ցոլացին.
Երկնից ցօղն իջաւ արնալից գետնին.
Մթնասէր թռչունք ձայներով խրոխտ
Գուշակում էին մարդկանց սուգ ու բոթ.
Ցետ դարձան Պարսիկք իրանց բանակը,
Նորից նոր սրբել սուրն ու դանակը,
Որ այդուց կանուխ, լոյսը չի ծագած
Վրայ յարձակուին Հայոց՝ կատաղած։
Բայց այլ տեսարան էր Հայոց միջին,
Վրդոված, տրխուր էր նոցա Հոգին,
Ոչինչ չէր լսում, թէ ոչ սուգ ու լաց,
Մեծ կորուստ արին, կորուստն էր անդարձ—

Վարդան չի դարձաւ դէպ իր քաջերուն.
Ո՞վ գիտէ ուր էր նա այն իրիկուն,
Գերի՞ է տարել նորա թշնամին,
Թէ՞ մահ է ստացել նա դաշտի միջին—
Ոչ ոք չը գիտէ։ Տրխուր ու տրտում
Ամեն տեղ նորան են Հայք պըտրտում,
Հոգւոց հանելով, վայ գլխուն տալով,
Աչքերից աղի արտասունք թափելով։
Աւարայր դաշտը տակն ու վրայ արին,
Աւաղ, յայտ չեկաւ դիւցազն արին,
Պինդ պինդ ձայն տուին «Ո՞ւրես, ո՞ւր Վարդան»։
Ոռնաղանքն կրկնեց Վարդա՜ն ու Վարդա՜ն։
Որբերի աչքին քունը չի մնում,
Քունը ինչ սփոփանք, թէ դարդ կայ սրտում։
Թէ լինի գիշերն մեղ քիչ մրխ՝ թար,
Առաւօտն, աւաղ, կուլինի վատթար։
Արթուն մընացին, չի մրտան բանակ,
Մինչև որ խօսեց երեք հետ խօսնակ։

13.

Հանկարծ լսեցին ձիան տրոփ հեռուանց,
«Այս ո՞վ է, տղե՛ր, ասին Հայք միմիանց.
Գիշերուայ ժամի՞ն ուղեց թշնամին,
Վրէժխնդիր լինել ցերեկուայ անցքին։

Բայց չէ, վայ նոցա, վատթար տեսարան
Ապշած աչքերուն եկաւ յանդիման.
Զէր արթուն Հայոց անկոչ այցելուն
Սարսած թշնամին տարաժամ պահուն.
Վարդանն էր, որին յուսահատ, տրտում
Որբացած Հայերն էին պրտրտում,
Վարդանն էր. . . բայց ինչ վիճակի հասած,
Արիւնաթաթաւ, արտին նետ ցրցուած,
Աչքերը մրթնած, երեսը ոժգոյն,
Վէրքիցը ծործոր կաթում էր արիւն.
Երկու մանկաւիկ բռնած ձեռնից
Կիսամահ քաջին իջուցին ձիից,
Բայց այն տուրբ աչերն, դէմքը հրաշալի
Զէին կրում յետք մահուն երկիւղի.
Նորա թուլացած բազկից այն ժամին
Զար մահ կրստանար նորա թշնամին,
Թէ որ խիզախէր գալ նորա առաջ, —
Այսպէս մնա մահուն նա միշտ մընաց քաջ։
«Տղերք, ասաց նա ձայնով դողդոջուն,
«Ուզացի ձեզ տալ իմ յետին ողջոյն,
«Ձեզ հետ գրկախառն, ձեզ համբոյր տալիս,
«Հանգիստ աւանդել այս շունչը վերջին։
«Ժամ է, ժամ թողնել աւեր Հայաստան,
«Ուր քար չի մընաց պինդ քարի վրան,

«Մենք էլ հետևողք նախնեաց աւանդին,
«Ստրուկ չենք լինել երբէք օտարին.
«Լաւ է մեր կեանքը կարճանայ սրբով,
«Քանց հաշուի, մաշուի թշնամու լրծով,
«(Իմ հինգ տարեկան հասակէս ի վեր
«Այսպէս տալիս էր ծնողն իմ պատուէր)
«Ցաւում է սիրտս, ոչ նեռի խոցից,
«Ցաւում է, որ շուտ գնում եմ ձեզնից,
«Որ չեմ կարենում ձեզ հետ միասին
«Արեան դաշտի մէջ փչել իմ հոգին.
«Այ թէ դուք մենակ վրհատիք մահից,
«Դողաք, սարսափիք վերահաս մահից,
Թուրն ու ասպարը մի կողմը գլորէք,
«Պարսկին կամաւոր ձեզ գերել թողնէք.
«Ա՜խ, քաջ իմացէք, ես, թէև թաղած,
«Պիտի վեր կենամ հողից կատաղած,
«Նորից նոր առնում ձեռքս թուր ու տէգ
«Ու ձեզ անողորմ խողխողում մէկ մէկ.
«Անէծք եմ թողնում ես այն վատ Հային,
«Որ ոչ ոք, այլ սէր ցոյց տայ գոռ Պարսկին.
«Այդ անհաշտ ոխը հիմկուց ցեղէ ցեղ
«Պիտի տարածեն Հայքն ամեն տեղ.
«Թող կորչին ազգեր երկրի երեսից,
«Հայը միշտ անհաշտ պիտի՝ մնայ Պարսից.

«Սառևերս երբէք չի մընալ անդորը,
«Այս թշուառ դաշտում կը շրջի մոլոր,
«Մինչև այն ժամը, ժամ օրհասական,
«Երբ Պարսիկն կամ Հայն կլինի կործան
«Արեան դաշտի մէջ՝ մորթելով իրար.
«Լոկ այն ժամանակ կառնում ես զգաստ։
«Դէհ, ճնա՛ք բարև, Տէր, ա՛ռ իմ հոգին։
«Կամ ազատ կեանք կամ մահ ազնիւ տո՛ւր
Հային»։

Լքուեց, ու իսկոյն նետը սահաբեր
Հանեց անողկիւղ կողից կարեվեր։

14.

Ա՛ռ ժամ մի որբիկ տարաբաղդ Հայերն
Ապշած, զարհուրած մընացին տեղերն,
Զիմացան՝ տ՛ասի՞ք է այս, թէ անուրջ։
Մեռած Դիւցազին խուռն կանգնած շուրջ՝
Ո՛չ լալիս էին, ո՛չ սգալ կարում,
Իրանց աչքերին չէին հաւատում։
Ինչպէ՞ս հաւատան իրանց աչքերին,
Երեկ չէ՞ր, ոչ պինդ կար հրսկայ կաղնին,
Որ քանի դարեր հարուածը հողմին
Զեփիւռ էր կարծում փչած մեղմագին.
Այսօր միջաբեկ ու թաւալգլոր
Կար նոցա առաջ աչքերով մոլոր.

Տնանում են քաջին գետնին տարածած,
Ջրլոտ ձեռները ցամքած, կարկամած,
Կէսխուփ աչքերը շունին առաջուան
Ո՛չ բոցը, փայլը՝ ջուխտ աստեղց նըման.
Դէմքը գունաթափ, գիծքը անմեկին,
Ո՛չ ոսի նշան, ոչ սիրոյ—ունին։
Տ'սած կաս մէկ օր, երբ բոցոտ շանթը
Երկնուց ցած իջնէ մինչ խաղաղ դաշտը,
Ահեղ որոտմամբ, փայլ արձակելով
Արթուն հովիւին զարնէ, տայ գետնով.
Անմեղ գառնուկներն որբիկ մընացած,
Ապաստան շունին, անտէր են թողած.
Ահից վազում են թուլիկ ոտերով,
Հովուին սուգ կարդում տրխուր ձէներով.
Ո՞վ է նոցա տէրն, ո՞վ խընամողը,
(Որբերի ափուփիշն է լոկ սև հողը)
Մահ, մահ խնդրեցին Հայերն միաբան,
Քաջից յետ չի կար էլ յոյս փրկութեան։

15.

Խուռն կան Հայերը մի փոսի առաջ,
Սրտից անդադար հանում են թառանչ,
Դառն արտասունքն նոցա աչքերին
Հոսում են առատ ամայի գետնին.

Դասք քահանայից դաշտումը չի կան,
Որ սուրբ աղօթքով հողին հողը տան,
Կնգրուկ ու զրմուռս նախնեաց աւանդով,
Այդ անշուք թաղման չի խրնկում ոչով.
Լալական կանայք կուրծքին ծեծելով.
Ողբի չեն շարժում դառն հեծելով.
Լուռ են հայերը, աչքերը պղտոր,
Դէմքերը անշարժ. մրտքերը ՝ողոր.
Հազիւ հազ նոցա շրթունքը գեղնած
Շարժելով՝ տալիս են նրշան կենաց.
Արդեօք ազօթք է, որ նոքա կարդում,
Թէ՝ արեան վրիժու տալիս են երդում
Իրանց Դիւցազն զիակի առաջ,
Որին խոստացան մեռնել քաջաքաջ.
Կարդէ կ՝արդ, լռիկ, մինը յետ միւսին
Վերջին համբոյրը տուին Դիւցազին.
Եւ երբ որ փայլեց առաջին շողը,
Քաջին մարմինը կլեց սև հողը։

16.

Կորաւ Դիւցազը, կորաւ Հայաստան,
Զի հայոց միակ յոյսն էր քաջ Վարդան.
Թշուառ հայ ազգին նորա վեհ սիրով
Էլ այնուհետև չբսիրեց ոչով.

Դարձ եւեւ եւեւ գնացին, անցան,
Ցիշատակ Քաջին իւրքը մոռացան,
Հեշտութեան կենաց և գանձի մոլար
Ազնիւ նրպատակն մոռացան իսպառ.
Իրանց սրբազան տեղիք պարծանաց
Թողին, մատնեցին խուժադուժ ազգաց,
Եւ հողը, գրնած գնով սուրբ արեան
Հարանց՝ արին շար թշնամիք կոխան.
Մոռացան վրէժն այն նուիրական,
Որ աւանդել էր նոցա Քաջ Վարդան
Եւ առելութեան փոխանակ՝ Պարսկին
Ցոյց տուին միշտ սէր և յարգանք խորին.
Ծրուեցին վիզերն Պարսից լծի տակ,
Դիւրութեամբ դարձան հրոյ հրապատակ,
Ա՜խ, արդարացաւ տեսին Վարդանին,
Որ նախատեսաւ անկումն ազգին:
Հայը հնատմուտ չէր ազնիւ մահուն,
Որ յետնոց թողնէր պանծալի անուն.
Վասակաց թիւը շատցաւ դարէդար,
Զուտ ազնիւ հոգիք չերևցան իսպառ.
Գործի եղեռան դարձան օտարաց,
Ոչ ոք դարմանիչ չէր ազգին չարեաց....
Թո՛ղ լռեմ, լռեմ, ազնիւ պատանի,
Այս թրշուառ անցքէն միտքս սասանի,

Քանի կը յիշեմ՝ սիրտս խոցոտի,
Ու ճրմլած հոգիս վերիժու բոցոտի։
Մոլեկրօն Պարսը կայ մինչև այսօր,
Ունի թագ ու գահ շրքեղ, փառաւոր
Ունի նա լեզու ու անուն փառաց,
Քաղաքը բարեշէն, տէր է շատ ազգաց,
Իսկ Հայը...վայ նորա գառը օրերուն,
Ի՞նչ ունի, բայց թէ լոկ և նեղ անուն,
Որը և յաճախ ինքը ամօթից
Զբզուած մերժում է իրա վրայից։

17.

ՎԵՐՋԱԲԱՆ։

Լրուց։ Ամպերը եկան ծածկեցին
Երկինքն, ու Լուսին աչքէս խլեցին.
Մընացի մենակ՝ հոգիս վերդոված,
Ձեռներս ծոցիս, գլուխս քարշ արած,
Եւ այնուհետև ամեն իրիկուն
Մընում եմ լուսնի խաղաղ ծագելուն.
Նորա տրխրամած դէմքը նայելիս՝
Ցիշում եմ թշուառ վիճակը ազգիս։
Ա՜խ, ցոլա՛, փայլէ՛, տխրադէմ լուսին,
Գուցէ քու փայլից փայլ տաս և Հայի՝,

Պատմէ՛ շատերուն Վարդանի մահը,
Կամ՝ ի՞նչպէս կորաւ Հայ ազգի գահը,
Կամ ի՞նչ վնհ սիրով սիրում էր Վարդան
Մայրենի հողը—աշխարհն Հայաստան։

ՎԵՐՋ.

ՑՈՒՑԱԿ.

1. Իմ երգը.
«Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից . . 1
2. Նկարիչ.
«Ակնապիշ, անձայն, խորհուրդ. Ճակատիդ . 5
3. Վարդան Մամիկոնեանի երգը.
«Հիմի էլ լռենք, եղբարք, հիմի էլ. . . 6
4. Օտարուհի և հայ երիտասարդ.
«Օտարուհին ինձ ասաց, հէր ես լալիս . . 9
5. Մշակ,
«Շլինքն արևառ, քրտինք երեսին, բեռը . 13
6. Իմ սոխակին.
«Սոխակ, ինչո՞ւ դադրեցար քու անուշ երգն. 16
7. Գանգատ.
«Հալածում է աշխարհն ինձ իր բնիկ . . . 17
8. Արեզակ.
«Ցուպը ձեռին, գլխին վեղար, տէրտէրմեան. . 19
9. Աղասիի մօր երգը.
«Զարթիր, մանուկ իմ նազելի. բաց այդ. . . 22
10. Արաքսի արտասունքը.
«Մայր Արաքսի ափերով 24

11. «Թէ իմ ալեւոր հերքս սևնային, ոյժքս ինձ յետ. 28
12. Դեւ Մրուս
«Այդ ինչ շիտի, ինչ աղմուկ յուսակտուր. 30
13 Քեռու օղլու
«Ընկաջ արէք, թարիք անեմ քեռ օղլուի. . 36
14. Բռնի պսակ.
«Լուսազէմին աղբիւրի մոտ գնացի 44
15. Երկու քոյր.
«Մեղնից շատ ա ւաջ կար մի թագաւոր. . . 47
16. Վերջին գարուն.
«Գարունն է եկել նախշուն թևերով 50
17. «Սիրելիք, օգնութիւն հասէք. 51
18. Հայոց աղջիկ.
«Դու տեսել ես երկինքումը 53
19. Էգուց
«Ինձ մի տունջել, մի շարշարել, սիրական . 54
20. «Վարդը բացուել ա ծաղկոցին 55
21. Ոստիկ.
«Ո՞ւր ես առաջ գնում, խեղճ ոստիկ ծառին. 57
22. Օրորոցի երգ.
«Քուն եղիր, պապաս, աչքդ խուփ արա. . . 58
23. Հայոց գինի.
«Բաժակներ առնունք, եղբարք 59
24. Ուսանող.
«Երբ որ հողից մարդ դարձայ 60

25. Ուսանողի կեանքը.
«Ուսանող ասածդ մի երջանիկ մարդ է . . . 62
26. Ունայնութեան վրայ.
«Ինչ ես ջարդում անձրդ, էյ մարդ, ցաւերով. 64
27. Բաժակ փրկութեան.
«Ահա մեծնոց արեւմուտքը Հրէաստանի . . . 65
28. Աստուածածնի պատկերը.
Ինչու լալագին աչքով նշխած է 67
29. Քահանայ.
«Այն ո՞վ է կանգնած ամբիոնի վրայ 68
30. Տապանագիր.
«Հազար երանի քեզ, մանուկ ամբիծ. . . 70
31. Խրատ Հայ հեղինակին.
«Պետք չի գրած առաջ գու լաւ միտք արա . . 71
32. Մայրաքաղաքում կրթած Հայ աղջիկ
«Շուշան շուտով դէմքդ ծածկէ 73
33. Մայրաքաղաքում կրթած Հայ երիտասարդ
«Տեղը եկաւ Հայ է նա, տեղը եկաւ՝ այլազգի . 76
34. Ընչեաց մարդ.
«Հետեւելով միշտ օրինաց աշխարհի. . . . 77
35. Աղէն տանն է.
«Զարմանք բան է, Հէնց գիդենաս 80
36. Թիֆլիզի քէֆ.
«Թէ սիրում իս թամաշա 82

37. Օրօրք Հայաստանի.
«Քընէ քընէ՛. իմ Հայրենիք. 84
38. Հայ և Հայութիւն.
«Ո՞վ է Հայը, միթէ նա է, որ խօսում է . . 88
39. Գանգատ բաղդէն.
«Ա՛յ իմ շար բաղդ, քեզ ի՞նչ ասեմ. 91
40. Փարի և Շահզադա.
«Փռանգի փարիը խիստ փոդուր է 94
41. Մուրացիկ կին.
«Ցուրտ է օրը, ձիւն է գալիս սև ամպերէն . . 95
42. Քաջ Վարդան Մամիկոնեանի մահը.
«Ո՛վ լուսին, լուսին, էլ քանի՞ այդպէս . . . 99